



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Lün  
✓17



11999 - 1



ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ

# ԽԱՂԱԼԻՔ

Պարսպ մարդու տանու միտք



Ով լուզենայ, իր պարկի  
թերամբ փակի, բող պառկի :

ԵԿԵԿ ՈՒ ԱԱՀԱՅԵՅ

ԽԱՂԱԼԻՔ ԱՐՈՎԵԱՆ.



ՏՓԽՒՄ

Ի ԶՊԱՐԱՆԻ Հ. ԵՆԳԻԱԼԵԱՆ Ձ. ԵԿԵԿ ԱԱՀԱՅԵՅ

1864



ОДОБРЕНО ЦЕНЗУРОЮ

Тифлисъ, 25 Февраля, 1863 года.

Цензоръ Кайтмазовъ.

28-17

9 17-60

## ՅԱՌԱՋԱԲՈՒ

Յատ անդամ պարապ ժամանակս միտք էի աւ նում, էնպէս մէկ բան գրեմ, որ մեր խալխի սրտովն ըւի, բայց չի գիտում, թէ ի՞նչ լեզուով գրեմ: Մեր գրաբառ լեզուն անդին է, նմանը չունի, ինչքան լեզու էլ որ գիտեմ, մէկն էլ ա՝ էն համը, էն քաղցրութիւնը, էն ճոխութիւնը չունի, բայց մեր վատ բախտիցը՝ հազարիցը մէկը չի հասկանում, ի՞նչ պէտք է արած: Երանի էն սհամբին, որ մեր ազգը քիչ քիչ կարողանայ էս կորած զանձը զանիլ, ու իր լեզուն սովորիլ, իմանալ: Բայց ո՞վ չի գիտի, որ սրան շատ ժամանակ կուզի. ու մինչեւ էն ժամանակը մնալ, ո՞վ կլաի, մարդ սա՞ղ կմնայ, թէ չէ:

Էս մտածելով ուզումէի, որ գրած բանս մամէն մարդ հասկանայ, ու էնդուր համար աշխարհաբառ գրեցի: Թող գիտուն մարդիքը ինձանից չնեղանան, նրանք շատ գիրք են կարդում, իրանց սիրութ միտքարում, ամա հասարակ մարդը մէկն էլ ա չունի, որ նա էլ նրանով իր պարապ վախտը՝ ժամանակն անց կացի:

Յատ մարդ է դանդառ անում, թէ մեր խալխը գիրք կարդալ, ուսումն չի սիրում. ախը ի՞նչպէս սիրի մարդ, որ զօրութիւնը չի հասկանում: Կարելի է, ևս սխալում եմ, բայց բնական է, մարդ միշտ էն բանը կսիրի, որ իր սրտովն ըւի: Եւրոպացայ մուզի էն շատ հիանալի է, խօսք չունիմ, ամա մեր սակն

ու զուռնէն մեր անկաջին տւելի աղիր գալիս, չունքի երեխութիւնից էնդւրը ենք սովոր :

Կատ բաներ էսպէս գրել, հազիր էի արել աշխարհաբառ, բայց էլ սիրտ չէի անում, որ լիս քցեմ: Վախէնում էի, թէ ժամանակս փողս կորչէ, գիրքս էլ մէկ սեղ թողումը վեր ընկած մնայ, փթի: Բարեկամմարդիք որ վախտ վախտ տեսան, խորհուրդ տուին ինձ, թէ շատ լաւ կըլի, որ տպիլ տամ: Իրաւ՝ թէ որ մուրազս տեղ համնի ու գրածս աղզին դիր դայ, որքան բախտաւար կըլիմ: Են ժամանակը ջանք կանեմ, որ դհայ լաւ բան գլեմ, թող էս առաջինն էսպէս ըլի:

Վարդացովը ինքն էլ լաւ կիմանայ, որ էս գրած բաները աւելի ուրախութեան համար են, էն պատճառաւ բոլըրը մեր խալիսի խօսացած բաներն եմ հաւաքել. թարգմանածներս էլ էնպէս եմ գուս ըերել, որ մեր խալիսի սրազն ըլի: Բայեաթիքը էն մորքով եմ դրել, որ չունքի մշջուում, հացի վրայ թուրքելար են էսպէս բաներ տառւ: Լաւ հայր հայեավար ասի, որ քիչ քիչ լեզուն քաղցրանայ, չունքի ու շենչ բան լիզուն էնքան չի քաղցրացնիլ, որքան խաղ ու տաղը: Յոյս ունիմ, որ ուրիշ մարդիք դհայ լաւ ըլ շինեն:

Աղասու մէկ քանի խաղը, որ էստեղ մէջ եմ բերել, կարելի է թէ շատ մարդ չիմանայ, թէ նա ո՞վ էր: Աղասին մէկ ջահէլ ու աշեղ քանաքոցի հայ էր: Վզւրաշի ժամանակին սովորութիւն կար, որ աղջիկ էին քաշում: Մէկ օր էսպէս աղջիկ քաշէլիս՝ կտրիմ Աղասին դուս էկաւ, մէկ երկու թուրքի սպանեց ու փախտ Փամբակ: Խղճի հօրնըօրը երեւանու ըեր-

դումը չորացրին. ինքն էլ Ռուսը որ երևան առաւ գնաց, որ հօրն ազատի, իրան էլ հօր վրայ տուին, սպանեցին; Էս խաղերը էն փախած ժամանակն է աւ սել: Արա պատմութիւնը շատ երկար ա, մէկ մէջ գիրք ա, որ զրած մօտիս հաղեր ունիմ ու նրա նով կարելի է իմանալ էն ժամանակվայ մեր աշխարքի հալը: Գրքի անունն ա. Վէրբ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԲ ՀԱՅՐԵՆԱԾԻՐԻ: Կնապէս էլ շատ զուարձալի պատմութիւներ աշխարհաբառ զրած մօտիս հաղեր ունիմ: Ո՞վ գիտի՝ բալքի թէ մէկ աստուածակը մարդ իր հոգու խաթեր տպիլ տայ: Ես չկարացի բոլորը 'ի միասին կրել չունքի խարջը շատ կըլէր :

**Ճ**է գիտուն, խէլօք մարդիք ինձ պախարակեն, դու էլ ա ինձ պահիր՝ սիրելի աղդ չունքի իմ ու զածս էն ա, որ քեզ ծառայեմ, քեզ իմ կնանքս տամ, քանի շունչս բելնումն ա:



ՏԱՐԱԿԱԳՐՈՒՅՑ

1.	Էս զրքի ճամփի խրատը	• • • • •	1
2.	Լուցիք Քորս անելիս, փէղի գնալիս	• • • •	2
3.	Մօլայ Մարտաղնի իշի քուռակը	• • • •	7
4.	» » » պղինձը:	• • •	9
5.	Զարմանալի մարդիքը	• • , • •	11
6.	Մօլայ Մարտաղնի ճաշը	• • • •	13
7.	Երկաթակեր մուկն ու աղքատո հարուստը	• • • •	19
8.	Հացակեր փէշը	• • • • •	23
9.	Շառերն ու կացինը	• • • • •	25
10.	Զըզմիսիը	• • • - -	25
11.	Բաքմազ (բադադ) ծախողն ու սաղաթը	• • •	27
12.	Ճրագոյ ման դալը	• • • •	28
13.	Զաւ զողացողը	• - • • •	29

ԱՐԱՎՊԵԼՔ:

ԱՍԱՅՈՒՄԸ:

25 Խոհեր	54
26 Բաղդատի ճամփութելը	57
27 Քոները	71
28 Արարելքը	74
29 Ճղնաւորն ու Արջը	76
30 Անքաղաքավարի էշը	79
31 Անցվորականքն ու շունը	80
32 Ալազպորակը Գորս անէլիս	80
33 Կատուն ու մուկը	81
34 Եղն ու շանը	82
35 Զղարի շունը ու Գիլը	83
36 Ծառն	84
37 Գէլն ու դառը	86
38 Արիւծն ու մոծակը	88
39 Արսուսն ու երկրագործը	90
40 Բայեհաթիք	93
41 Ազգասէր մարդը իր մեռնելու վախորը	98
42 Խմ բարձեկամ Ազաղան Վարդանեսմի պատկերի առաջին	100
43 Տևուր դանզատ բարեկամի մօտ	102
44 Ազատու որտի փափաղը	103
45       »      Տիղութիւնը	103
46       »      Խասը	104
47       »      Վերջի սուքը	106
48 Ֆէօրօրս սօմ ՈՐԴԻԱԿՈՆ Սերի: ԵՐԳԱԿԱՌ ՄԵԿ ՍԵՐՄ ՏԱԼՈՒ:	109

15 . . . . . առափ քննութ 11  
 25 . . . . . պայտ ու մերժ 21  
 35 . . . . . դաս ու մաք 31  
 45 . . . . . պատճեն ու մաք 71  
 55 . . . . . առ ու նույնութ 81  
 65 . . . . . պատճեն դա 91  
 75 . . . . . պայտ ու (միաբան) միաբան 95  
 85 . . . . . մի ու մաք 105  
 95 . . . . . պայտ ու մաք 105  
 105 . . . . . պատճեն մաք մաք 105  
 115 . . . . . պատճեն մաք մաք 105

## Ես գլորի ճամփի խրատը

Գնա՛ իմ խեղջ գի՞րք՝ գնա՛ մարդամէջ.

Գլուխդ քաշ քցի՛ր, մի՛ նեղանար հէչ:

Անկաջդ փակի՛ր, սիրտդ լէն բռնի՛ր,

ինչ ասեն, խօսին, տա՛ր ու համբերի՛ր:

Ճամփորթի գլխին շատ փորձանք կգայ:

Անձրեւ, ձին, կարկուտ հազեր համեշայ:

Դուման ու կայծակ, շոք, բուք ու կրակ

Ամէն տեղ կը լին, ամէն ժամանակ:

Եսպէս բանիցը ով շուտ վախէնայ,

Ու ճամփի կիսիցն վեր կէնայ, եդ գայ,

Ոչինչ շե շահվել դարդակ կմնայ:

Փորձանքից մարդը՝ լաւ չի՛ նեղանայ:

Ի՞նչ ես դարդ անում, որ վրէդ խօսին,

Եա քեզ ծաղը անեն, եա աչքից քցնեն:

Ամէնի սրտին դուր դալ չի՛ ըլիլ.

Ամէնի խաթրը ով կարայ առնիր:

Աշխարքի բերանն ջվալի բերան:

Առակ է ասած՝ ում ասես քո բանն:

Հալբաթ մէկ օր էլ արեւ դուս կգայ,

Էն վախտն կիմանան, թէ ուզածդ ի՞նչ ա:

Գնա՛, Աստուած քեզ բարի ճամփայ տայ,

Ում տուն էլ մտնիս, բարով տուր, գնա՛:

Մտքումդ պահի՛ր էն վաղի առակն,

Որ չանես քեզ էլ ինձ էլ խայտառակ:

Որ մէկ ծեր մարդ իր ջահէլ որդու հեռ

Դուս էկաւ, գնաց, աշխարք տեսնի. եղ  
ել իր տունը գայ: ինքն իշխ նստեց.  
Մնդսնգալով՝ նա որդին առաջ քցեց:  
Ճամփորթի մէկը էս տեսաւ, ասեց:  
Ի՞նչպէս հէր ա նա, որ որդուն թողել  
Ոտով լիտր ու կէս՝ ինքն իշխ բազմել:  
Ասածը ծերը լսեց, վէր էկաւ,  
Որդուն նստացրեց, ինքն առաջ ընկաւ:  
Մէկն էլ էն կողմիցն իր զուռնէն փչեց:  
Եթրկուսդ էլ նստիք, ի՞նչ բան ա էղ մեծո:  
Սրան էլ լսեց լողօղ հալեորն.  
Ոտներն ճօլօլակ էն մեծ միրքաւորն:  
Հէր ու որդի որ իշխ վրայ բազմած՝  
Զմտան քաղաքն, էլ մարդ չի մնաց,  
Որ մատով նրանց ցոյց չի տայ՝ յանկարծ:  
Բեղ միրուք՝ բոլորն լաւ ողալելով,  
Մափ տվին քամակիցն, վըէն ծիծաղելով:  
Խղճի որ ճարը կտրվեց, վէր էկաւ,  
Իշխ ոտները կապեց, մէկ փէդ լաւ  
Միջովն անց կացրեց, մէկ տուտն իր ուսին,  
Մէկն իր որդու դրեց քամակին:  
Քար ու ձոր բերան ու աչք բաց արին:  
Ճարն որ կտրվեց, ի՞նչ պէտք է անէր,  
Միլու շտարաւ աշխարքի բաներ:  
Հազար ուշունց ու անէծք կարթալով,  
Եշը վեր առաւ, քցեց ջուրն լալով:  
Գետի ղըաղին կանգնած սուք արեց,  
Վիս դառնայ հոգիդ՝ այ իմ էշ ասեց:  
Փ՞նչ կըէր, տանից չէինք դուս եկել,  
Ոչ ուրշի լսել ոչ մեր տունն քանդել:

Ինձ աեսնողը թող իր գլուխը լսյ,  
Ուրըշի դնչին հէջ մտիկ շտայց:

Ամէնի խօսքին անկաջ գնողը  
Գլուխը կկորցնի, եա էլած ղըւղը:  
Ովլայեաղ չանի քեզ վերցնի, կարթայ,  
Թող իր շնորքը պահի, մօտ չգայ:  
Քար ու չու ընկնիլ ի՞նչ մէկ մեծ բան ա,  
Խոր խոր խօսալուցն ովլինչ կիմանայ.  
Խօսողին էլ միշտ հասկացող պաի,  
Թէ չէ փուչքամին կառնի, կտանի:

### ԱՍԱՑՈՒԱՆՔ ԲՆԱՑԱՑՔ:

ԻՆՔՆԱՑԱՐՄԱՐ ՅՈՐԻՇՈՒԱՆ:

### Լոռըցիք:

1

Երկու լոռըցի՝ հալալ ախպօր նման՝  
Թուր ու թվանք կապած սար ու ձոր ընկան,  
Որ իրանց համար ֆորս անեն բերեն,  
Իրանց օղլուշաղն էնդով կերակրեն:  
Հէնց մտան մէշէն, մէկ ծառի վրայ  
Տեսան, որ մէկ չաղ չաղ աղաւնի կայ:

Ընկերի մէկը միւսին ասեց:  
«Տյեղս կաց, քյընամ, տյանիցն յաղ պյիրեմ,  
Նլէ յէս սհյաթին, յես քյըմյատաղ յեմ,  
Ատյայ՝ մե՛ր տղյայ՝ մեր պյախտը պյանեց,  
Շուտով յետ քյըքյամ, յէս թըվաւոյին  
Լյաւ հյաչքը պյոնի, մնյաց յէս ծյառին:  
Մէկ քյեաբյաբ յանենք, հյուտենք, լյաւ պյապյաթ:  
Մըհյիկ քյընումյեմ, ոյու քյիսես լյաւ վյատա:

Նա ուշացաւ, միւսն էլ չամբերեց,

Տրեխը հանեց, մաքումը դրեց.

Որ ծառն վեր ըլի ու ձեռովլքոնի :

Ախմախ ֆորսկանը դեռ կիսաճամփի:

Աղաւնին թռաւ, գնաց իր քէֆին :

Լոռցու աչքը բաց մնաց, հոգին

Էլ չե համբերեց, ասեց բարկացած :

«Տյօ չառլամիշ զյուշ տյու յոր քյու հյունյարն

Պյանյացնիլքյիտես, յես եմ հլէ նաչյարն :

Յոր տյու յէտ պստյիկ տեղյովն կյթռչիս,

Զեռս յովէ պյունել յոր դօլէս փախչյիս»—

Ասեց ու զընիկ ծառի ծէրիցը

Ենպէս դրըմփաց, ու իր ջանիցը

Զեռք վերցնիլն, հոգին տալը մէկ էլաւ,

Ու զուռնայ մէիզն հնտեղ ձղվեցաւ :

Ինչպէս պատահեց: Աղաւնու թեիցն

Մէկ բմբուլ էկաւ ընկաւ վերելիցն

Լոռցու բերանն, որ ընկերն էկաւ,

Իշտահը զւած՝ մօտին կանգնեցաւ :

«Հյա՞ քյընըծահէր, տյու յիշե քիւոյակ:

Ասեց ախմախը ու գնաց աղաք:

Ա'տյայ՝ քյիւ փյորը իյողի թյավյան յէ՞ր,

Հինչ յէիր ցյաքիւմ, ու յէս խեղճ, յանտէր

Ղշին սյաղ, սյաղ ևս տյու վյորդ քյաշել,

Կըլիսէդ խոյով յինի յիշայահդ, վյորդ յէլ:

Մէ քյիւ սյաբը յէիր յարել, ի՞նչ քյընէր»:

Ասեց, ընկերին տեղն ու տեղ թողաց,

Քամի կուլ տալով իր բանը գնաց :

Ա'ստուած ողորմի լոռցու հոքուն,

Էն ֆորմն, ընկերն ոչ ևս տեսնիմ, ոչ դուն :

Զ.

Երկուսն էլ մէկ որ էլի ֆորս դնացին,  
Շատ որ ման էկան, բան չժարեցին.  
Էկան, մէկ ծառի շվաքի տակին  
Քրտինք սրբելով՝ ծանր նստեցին :

Շատ ու քիչն Աստուած դիտէ՝ ի՞նչ ասեմ:  
Քօռաղակինայ՝ մէկ ճանձ, չգիտեմ  
Ի՞նչ կողմից էկաւ, մէկի ճակատին  
Նստեց ու արինն ծծեց իր քէֆին :  
Գօչաղ ընկերը էս որ հէնց տեսաւ,  
Մատը բերնին դրեց, շվացրեց, ասաւ:  
«Հէ Հանի՝ քյըմատաղ՝ մէկ ժուկ սաբր արտ,  
Աստուած մեր նյասիրն հյասցրէց յէս ա»:  
Ասեց ու թվանքն դօշին դէմ արեց,  
Նա ոտը քաշեց, միւսն դլուխը թեքեց :  
Ընկերի մահը հանաք իմացաւ,  
Մեռած մէյիդը կապեց, վեր կալսւ:  
Գօմշի քամակին դրած՝ մէկ ջրի  
Որ մէջը մտան, շոքն առաւ գօմշի  
Զանն. աղաւարի կուզէր, որ պարկէր,  
Ախմախ ընկերը էն կողմիցն ուսեր  
Քաշէլով՝ գոռաց, մեռլին վեր հատեց,  
«Ասյայ քյու նանի միսը շօն ծյամի.  
Հէնց մեռել յես, յոր բերանդ զօրում չի.  
Մէկ հա տպիուիւ էլ ա անես էդ կեօմշին,  
Չթողաս նստինք, յոր քյնանք մեր պլանին»:

3.

Մէկ քանիսն էլ մէկ որ կացին ուստին  
Գնացին, փէդ անեն ու ճամփի կիսին

Մէկ ձիաւորի որ ռաստ չէկան,  
Կորեցին աղաքն, խնդրեցին նրան,

Որ տեսնին՝ թէ ում կացինն է լաւ սուր  
Ղօյմաղօչում դու, խէլօք ձիաւոր,

Բոլորի կացինն, որ մօտ չի արեց,  
Ղամշեց ձիուն ու գարնըվէր քաշվեց :

Փալան ու նօխտայ կորցրած իշխ պէս

Կանգնած՝ ճմբուեցին նրանք աչք ու երես :

Սատանին նալա՛թ: ձիու քուռակը

Մնացել էր եղ: բռնեցին աղաքը:

Ինչ շոր ունէին, բոլորն հանեցին,

Նրան բարձեցին, որ սատկի տակին,

Որ նրանց սիրտը մի քիչ հովանայ :

Բայց դշաղ քուռակն՝ բարդ ու բարխանայ

Հետն առաւ, վազեց՝ արտինդ անելով:

Լուցոնց աչքը սառած մնալով,

Հէնց իմացան, էս տեսածն հրաշք էր:

Քորելով անսաս՝ դլուխ ու բեղեր.

Ընչանք տուն հասան, անձրեի տակին

Իրանց վըի կեխան էլ մէկ լաւ լուացին :

4

Ելի էս օրհնած խալխը հաղըլած՝

Գնացին մէկ օր մէշէն՝ հաւաքված :

Տեսան՝ մէկ լաւ ծառ քարափի ծէրին.

Թէ կորենք սրան, էսպէս միտք արին,

Մեզ խէր չի անիլ խոր ձորը կընկնի, մայթ  
Մեր աշխատանքն էլ հէտը փուշ կըւի :

Նատ որ միտք արին, խօսքը մին էլան,  
Որ կախ ընկնին, ձեռ ձեռի նրանք տան,  
Եւ էնպէս քաշեն, քօքըհան անեն,  
Իրանց միջումը յետոյ փայ անեն :

Աստուած կանչեցին, ճօլօլակ էլան :  
Մառը պոկ չէկաւ. իրանց գլուխն ինչ լան :  
Ասյայ մեր տղյերք՝ այուք զայիմ կյացէք,  
Մի ծեռիս թքիմ. յետոյ քեաշեցէքյ :

Զեռը բաց ընկաւ՝ նրանք իրար գլխով՝  
Խաչ, աւետարանի անուն տալով,  
Էնպէս գլորվեցան, քարափն վէր ընկան,  
Էն գընալն էր, որ գնացին, եղ չէկան :

## Մօլա մասրադնի իշի քուռակլը

Իշի քուռակլը վերջն էշ կը դառնայ,  
Ամարաթում, թէ գոմում մնանայ :

Մօլայ Մասրադին շատ բան է արել,  
Ինքն ախմախացել, ուրը շնն խարել,  
Բայց նրա հունարքն իշի քուռակին  
Իր իշութիւնից էլի չի դարձրին :

Մայիս ամիսն էր, օրերն քաղցրացել,  
Խսան ու հայվան սար ու ձոր բռնել,  
Ամէնի արինն նոր էր եռ ընկել,  
Ամէնի սիրտը էլ եղ նոր բացվել:  
Մէկ քաձ էշ էլ իր քուռակն քամակին  
Քցած՝ հանդումը նայում իր քէֆին.

Ինքն թաւալ տալիս ախպումն ու զռում,

Քուռակն էլ պոչը ցցած՝ մօտն խաղում:

Մօլէն որ իր սուրբ ղուռանիցն աւել՝

Ուղտը ուլիցը չէր կարող ջոկել:

Նրա չափ ընկնիլն որ աչքովն ընկաւ.

Ելած ուշք ու միաքն էլ նրա հետ թռաւ:

«Ձահէլ վախտն էսպէս որ հունար ունի

Էս օրհնած գառը, ու փախչիլ գիտի.

Որ մեծանայ հօ՝ աշխարք կարմացնի,

Երբ տակիս՝ նստած էսպէս չափ քըցի»:—

Գողացաւ քուռակն, տարաւ գոմն, կապեց:

Եշն լեզու չունէր, խելքը ո՞վ տվեց.

Որ տիրոնչն ասի քուռակի տեղը,

Մօլէն էլ գիծ չէր, ասէր, դառնար գողը:

Էսպէս տանը կապեց, ոչ թէ խոտ, խոռակ,

Չամիչ ու խուրմայ ուտէր մեր քուռակն:

Արե ու անձրե աչքը չը տեսաւ.

Թօղ ու ախպ, փալան, ոչ բեռը տարաւ:

Էսպէս պահելուցն էլած ղըվաթն էլ

Պակսեց: Մեր թամբալ քուռակն մեծացել

Իր իշե բօյը, իր իշե հասակն

Առած: Վախտն էր որ տեսնին Մօլի փառքն:

Մէկ աղեղ օր էլ որ էկաւ, հասաւ,

Մօլէն էլ լաւիր թաղարէքն տեսաւ:

Ու անկանկալով, քամի կուլ տալով,

Իշե քամակն բազմած խիստ քէֆով:

Նօխտի փոխ չաթու, թամբի տեղ փալան

Իշե դունչն ու վըէն դրած էկաւ մէյդան.

Որ ջերիդ խաղայ, քանի ինքն սաղ ա-

Բայց էշ ու ջերիդ — այ Մօլայ Աղայ:

Զիանքն էլ մնացին հուշտ էլած, սառած:  
Զէ թէ ձիաւորքն՝ բերանները բաց:  
Մօլէն ամէնի սիրան առաւ, ասեց,  
Որ իրան նայեն, ու էշը քշեց:  
Քօռաղաղինայ՝ էն օրը շոք էր.  
Զիրիդի տեղն էլ ախպսին մօտ էր:  
Թօշ, թօշ կանչելով խեղճ Մօլէն բերանն  
Պատուեց, բայց իշել զուղը չի մասն:  
Բերնով օրհնում էր, ոտով վեր հատում,  
Գլուխը սղալում, եղելիցն բգում,  
Բիզն էլ բէզարեց, քարն էլ, քացին էլ,  
Բայց կակող ախպումն իշել խելքն առել:  
Փռվեց չորս ոտովն էն տեղ իր քէֆին.  
Ոչ ծեծին նայեց, ոչ Մօլի միզքին:  
Տեսնողք փոր, բերան բռնած՝ քաշվեցին,  
Մօլէն զօռ տվեց ուշունցի պարկին:  
Բայց խելքի մէկն զըաղ քաշեց նբռան,  
Ու կարթաց զլսին սաղ սըհաթ զուռան,  
«Ու իշեն կուզի նոր մարիֆաթ տալ,  
Աստուած զիտէնայ. ինքն աւ էշն հալալ:» —

## Մօլայ Մասրաղնի պղինձը

Մօլայ Մասրաղինն իր հարեւանիցն  
Մէկ օր մէկ պղինձ սկսեց փոխ ուզել:  
Իր կարիքն հոքաց, եղ բերեց պղինձն,  
Բայց հետն էլ մէկ փոքր թաւոյ էր դրել:  
Խեղճ հարեւանը մնաց զարմացած,  
Խորամանկ Մօլի միզքը չիմոցած.  
«Պատուելի՝ ասեց, էս ի՞նչ ընկեր ա,  
Որ պղնձիս հետ իմ տունս էկել ա:»

Ես քեզ անցած օրն մինը փոխ տվի,

Հիմիկ ջիստվել են. ի՞նչ պէտք է ըլեռ:—

Սուրբ Մօլէն նրան փառաւոր դիմով  
իմամ, Հուսէնի, Ղոռանի անունով  
Գլխումն նստացրեց, թէ նրա պղինձն  
Ծնաւ իր տանը: Թէ չէ իրանից  
Գիշ չէր, որ իր տան հաջաթն վերցնէր  
Ու նըհախ տեղը ուրիշին բախշէր:—  
Հարևանն թէ և շատ էլ միաք արեց,  
Ուսերը քաշեց, գլուխը շարժեց.

Բայց աւելի շաշն ում փորն ա ծակել.

Ով շատ ագահ է, վայ էն մարդին էլ:

Հարևանն սկսեց շնորհակալ լինիլ

Ու ուրախութեամբ թաւէն տուն տանիլ:

Մէկ քանի օրից եղը միւսանգամ

Մօլէն էլ էկաւ առ իր բարեկամն,

Դեռ չէր բերանը բաց արել, իսկոյն

Դրացին խնդութեամբ՝ շուտով վազեց սուն,

Պղինձը դուս բերեց, մեր Մօլին տվեց,

«Ելի կըծընի», իր մաքումն կարծեց:

Բայց Մօլի հէսարն դեռ չէր մտածել:

Օրն շարաթ գառաւ, շաբաթը ամիս.

Զարէն կտրեցաւ, պղինձը պահանջել

Ակսեց դրացին, բայց դու ոչ մեռնիս:

Մօլէն էլ ոչ սուրբ, ոչ իմամ թողեց,

Գեար ու Ղոռանով չարաչար երդվեց:

«Թէ նրա խեղճ պղինձն՝ մէկ ամսից առաջ

Վայ տէր կամսէլով, մեղայ գոչելով

Հոգին աւանդեց, երկինքը գնաց»:—

Դըրացին մնաց քար կտրած, սառած.

Հենց բռնես, մէկ ձի գլխին քայի տվեց.  
Մոլի ուն ու զլուխն չափելով ասեց:  
«Հանաքն ուրիշ վախտ արա դու ինձ հետ.  
Եղակս մասալէքն պառաւքը կասեն.  
Կամ պղինձս տուր, կամ նրա ջառըմն.  
Թէ չէ ով է լսել՝ թէ պղինձը կըմեռնի»:—  
— «Եսպէս հաստագլուխ մարդ էլ կըւենի».

### Տօ քօպակ.

Մնանիօղն մէկ օր պէտք է մեռանի.  
Ով որ ծնելուն հաւատ կընծայի,  
Ու ծնած որդին իր տունն կտանի.  
Բաս մահուան սուքն չպէտք է կատարի:—  
Դիւանն էլ Մոլին իրաւունք տվեց:  
Դրացին թէև գլուխն քարէքար տվեց.  
Զեռն ոչինչ չընկաւ. ում էլ հարցրեց,  
Հենց էն շահվեցաւ. որ վրէն ծիծաղեց:  
Խորամանկ մարդիցն Աստուած ազատի,  
Խելացին նըրա ոչ խէրն, ոչ շառը  
Իր օրումն երբէք չի պէտք է ուզի:

### Չարմանալի Մարդիքը:

Չատ տեղ ման էկած. շատ երկիր տեսած՝  
Մէկ մարդ՝ էլ կրկին իր աշխարն էկաւ.  
Ծանօթ, բարեկամ գլխին հաւաքված՝  
Կուղէին գիտել, թէ նա ի՞նչ տեսաւ:  
Աեղուս չի բռնում, որ ձեղ եղ պատմեմ,  
Ինչ որ լսել եմ ու աչքով տեսել.  
Թողէք, բարեկամք. փոքր շունչ առնեմ,  
Ապա լսեցէք, ինչ կուղեմ ասել:

Վայ էն մարդին, որ իր տանը միշտ մեայ.  
Ու աշխարքիցս ոչինչ խաբար չիմանայ:  
Դուք լաւ գիտեք, թէ ի՞նչքան մեծ ա երկիր.  
Ու ո՞րքան ծով, աղգ և քաղաք ու բաներ  
կան ամէն տեղ հազար տեսակ զանազան,  
Ո՛չ թիւ ունին, ու ոչ սահման:

Հատ տեղ կայ, մարդիք իրար միա ուտեն,

Հատն էլ հացի տեղ խոտը ճաշակեն.

Ոսկի ու արծաթն՝ էնպէս երկիր կայ,

Խոտի հետ դուս գայ, ջըրի հետ գնայ:

Բայց էս ինձ էնքան չի զարմացրուց.

Ինչպէս մէկ երկրի մարդքերանց գործն:

Յառաւոտէ մինչև 'ի մուժն անխափան

Նստին նրանք 'ի միասին լուռ, անձայն:

Ո՛չ գժոխքն են մտածում, ո՛չ արքայութիւնը.

Հաց ու կերակուր խապա մոռացած,

Ու Աստծու աչքիցն՝ հէնց բռնիր՝ ընկած,

Երար երեսի նայիլ չեն ուզում:

Ամպն էլ որ գոռայ, կայծակն էլ թափի,

Թօփ ու թնդանօթ նրանց զլխովն անցնի,

Թէկուզ սաղ երկինքն նրանց զլխին փուլ գոյ,

Մէկն էլ ա տեղիցն չի ուզիլ. ժաժ գայ:

Թէ գժողքն էի գնացել հաւատացէք ինձ,

Էն զարհուրելի կերպարանքն ինձ

Զէին պատահիլ: Քանի միտքըս գայ,

Հոգիս ու մարմնս սարսի ու դողայ»:—

«Ախր ի՞նչ է նրանց միտքն ու կամքը,

Որ էսքան մտածեն, հարցրին բարեկամքը:

Կարելի է թէ իրանց աշխարքի հոքն են միշտ քաշում»

«Ախր ի՞նչ էք ասում»:

«Ուրեմն իրանց հին մեղքն են բայ ըլում»:  
 «Ո՛չ բարեկամք, ոչ ուրեմն անդին քա՞րն են նրանք  
 պարտում»:  
 «Չէ, չէ, ի՞նչասեմ»: «Ուրեմն խելացնո՞ր են, որ չեն զգում,  
 խօսում, կամ բառում, բայ ի՞նչ են անում»:  
 — «Թուղթ—թուղթ են խաղում»:

## Մօլլայ Մասրադնի ճաշը:

Ճամփէդ բռնի, գնա, ամէն ծափ ավողի  
 Առջևն մի պար դալ. ոտք կդիպչի քարին:

**Մօլլայ Մասրադնին բէհեսար չարեց,**  
**Մէկ քոռ կնիկ առաւ, հետը պատկիլց:**  
**Մօլլէն ու կնիկ - վայ քո տղիս տղայ.**  
**Լսողն չի ասիլ թէ Մօլլէն գիծ ա:**  
**Մօլլի փորն սկսեց շուտով ցաւ ընկնիլ,**  
**Կերած, խմածը քթիցն վէր թափիլ:**  
**Օրն հազար անգամ եա դուս էր գնում,**  
**Եա տեղը քցում, միջումը պարկում:**  
**Բայց հիւանդի սիրտն էլ շորվայ կուզի,**  
**Ի՞նչ անի խեղճը, ո՞ր ջուրը ընկնի:**  
**Կերածն համ չունէր, մէկ օր ալանի,**  
**Էր կնկայ էփածն, եա խազառ աղի:**  
**Զարէն որ կարեց, կնկայ խօսքովը**  
**Վեր կացաւ, գնաց իր զանքաչի քովը.**  
**Որ մէկ ճար անի, աղչկանն դարձ բերի,**  
**Աղին, ալանին նրան սովորցնի:**  
**Զանքաչն որ տեսաւ նրան տուն մանելիս,**  
**Կարծեց փէշքաշով ա փեսէն գալիս:**  
**Հէնց բարով տվեց ու միտքն խմացաւ,**  
**Գլխին բամբաչեց դուռը հետ արաւ:**

Կրեմ էղ գլուխըդ, ի՞նչ կարթացող ես,  
Բաս էդքան բանն էլ դու խմացել չես;  
«Շատին շատ քցի», քչին քիւ ասա  
իմ աղջկանը. ու ջհանդամը գնահա։  
«Շատին շատ, քչին քիւ» ասելավ էկաւ,  
Անձար Մոլէն մէկ կալի կշտով անցաւ։  
Հէս հաղաղին երկու ախաղէր էլ  
կալը կուզէին ճոթ անիլ, տանել։  
Մեծն ասում էր՝ թէ ինձ շատ կհասնիւ,  
իմ օղլուշաղըս շատ շատ է չունքի։  
Փոքրն էլ ասում էր, պէտք է պսակվիմ։  
Հարսանիք անեմ, շատն ինձ տուր, տանիմ։  
«Շատին շատ, քչին քիւ» Մոլէն որ չասեց,  
Մեծ ախաղօր սիրոը էրկու թիղ եղփեց։  
«Տես. սուրբ Մոլէն էլ ի՞նձ ա զրտում,  
էլ ի՞նչ խօսք ունիս, նըհախ տեղն կռվում։  
Դօյմաղօչում տղայ՝ եղանըդ քաշի։  
Մոլի ոտն ու գլուխն ձուի պէս ջարդի։  
«Ա՛խաղէր՝ ի՞նչ ասեմ. գլուխըս քաշը,  
Էլ տեղն ասածս. քո խէրն ու շառը։—  
Տօ քնիակ՝ տեսար. կալ ենիք ճոթ անում,  
Դու ուր ես գալիս, մեր մէջն խառնրվում։  
Դրաղովն անց կաց, մէկ բերան ասա։  
«Աստուած բարաքեաթ ու միշտ ձեղ խէր տայ։  
«Աստուած բարաքեաթ ու միշտ ձեղ խէր տայ։  
Ասելով գնաց մէկ խէլիմ ճամփայ։  
Տեսաւ. մէկ աժդհայ մարդ մէկ տեղ նստած,  
Շորերը հանած, արևեկող արած,  
Եր չար թշնամու միար պոկում ա,  
Բերանը տալիս, որ քիւ գինջանայ։

Քութութ անելով, քուցին անելով

Զանը քօս ընկել դնդներն գուլացել:

Գլուխն վեր քաշեց, որ տեսնի, ով ա.

«Աստուած բարաքեաթ, խեր տայ համեշայ»:

Որ չի լսեց անձարն, ջանը դող ընկաւ,

Հենց էնպէս տկլոր տեղիցն վեր կացաւ,

Մեր ախմախ Մօլին Էն քօթակն տվեց,

Որ նախրի իշեն կհամարէր էծ:

«Բաս ի՞նչ ասեմ, ի՞նչ ինձ մի՛ սպանիլ,

Թէ ասածդ չանեմ, ինձ մարդ մի՛ ասիլ»:

— «Ա'խմախ, զուռումնաղ» տօ Մօլի կտնր.

Չես կարող ասիլ ինչպէս մէկ ուղւոր.

«Աստուած բոլորին ջնջի՛, փչացնի՛»,

Հախ միայն տէրը դրանց քօքը կտրի՛:

«Աստուած բոլորին ջնջի՛, փչացնի՛»

Բերան անելով Մօլին խելացի

Հենց Էն տեղն էկաւ, որ մէկ մեռելի

Նաշն ուսի դրած, որդի, ընտանի

Բոլոր խալսի հետ զլիներին տալով,

Տանում էին՝ որ թաղեն՝ սքալով:

«Աստուած բոլորին ջնջի՛, փրչացնի՛»:

Որ չի լսեցին խալսն ու գեղըցի,

Հենց բոնկս՝ մէկ թօփ բիրդան տրաքեց.

Դագաղն վեր զրին, Մօլին էլ կանգնեց,

Հենց իմացաւ՝ թէ ուղում են խնդրել.

Որ աղօթք անի, փող տան իրան էլ:

Մօլի ոտն ու զլուխն նրանք աղցան արին:

«Տօ բէմուրվաթներ, լսեցէք իմ բանին.

Ախը ի՞նչ ասեմ, սիրաներդ հովանայ.

Մէկ խօսք ասեցէք. էս ի՞նչ մուրվաթ ա:

Թէ որ էն շասեմ, աչքըս հանեցէք»:-

«Այ իշագլուխ՝ տօ մէկ միտք արէք,

Մեռլին ով կասի. ջնջվի, փըշանայ :

Կասեն՝ տէր Աստուած հոգուն ռահմ արա»:

«Տէր Աստուած սրա հոգուն ռահմ արա»:

Մերաելով ընկաւ էլ էդ ճամփէն նա:

Տեսաւ, մէկ սատկած շուն գուս են քաշում:

Որ տանին, հորեն մէկ զըրաղ տեղում:

Տանողք աչք ու քիթ բռնել են զայիմ,

Որ մուռտառ հոտիցն զահլակուշտ չըլին:

Աչքն առաւ թէ չէ մեր գիտուն Մօլի,

Լեզուն բան ընկաւ, անոտ ջաղացի

Պէս պտուտ էկաւ, իր աղօթքն ասեց,

«Աստուած ռահմ անի հոգուն», ձէն տվեց :

Շունն էլ չէր տանիլ նրանկ ի՞նչպէս տանին:

Մօլի խոր հոգին կատիկն հասցըրին:

Խելք ու միտքն թռաւ, ճամփէն կորցրեց.

«Ի՞նչ ասեմ» ջանըմ» գէջգան գէջ ասեց:—

«Տօ դուդուկ քօփակ, աչքըդ քուանայ,

Տեսնում ես ախրը՝ մեր տարածն շուն ա:

Մէկ թըքիր գետնին, հուփ տնւր աչքիրիդ,

Ու յետոյ ասա. մաիկ տնւր առաջիդ:

«Փիւֆ, փիւֆ, փիւֆ. էս ի՞նչ անիծած հոտ առ,

«Զհանդամը գնա, սրա սպանողն եդ չգայ»:

Հիմիկ էս գան էր սերտում ջրատարն.

Որ մատը խառնեց մէջն սատանէն չար:

Հէնց մտաւ կուչ գալով մէկ հարսկատուն,

Տեսաւ թամաշէն, պարն ուրախութիւն:

Քիթը պինդ բռնեց ու տվեց հարայ.

«Փիւֆ, փիւֆ, փիւֆ. էս ի՞նչ անիծած հոտ առ:

Զուռնաչին զուռնէն, դափիը դափաչին,  
Քափիկիրն ու թաւէն՝ մքրուկն ու աշչին,  
Կպրած տիկին ու թասն պարոն շերաչին,  
Էնպէս լորփեցին Մօլի ճակատին.  
Որ աչքն բուռն ընկառ, սկսեց ձէն տալ,  
«Ա'խպէր՝ ի՞նչ ասեմ, էս ի՞նչ ա իմ հայն:—  
— «Բանը գլխիցդ կարսիբ ա՝ քօփակ՝  
Որ մէկ աչքդ էլ ա քցես քո աղաք:  
Չեռդ էլ ա ժած տուր, թէ պար չես գիտում»,  
Ի՞նչ ես էդ հոտած ըռեխըդ ցրվում:  
Մէկ իծի պէս էլ չե՞ս կարող մկկալ,  
Ես իշե թահըր կանգնիլ ու զռա՞լ:

Էսպէս կռները տափէթափ տալով,  
Հետը մկկալով, վախտ վախտ գրուալով,  
Հէնց ընկառ ճամփայ, առն հասնի բարով:  
Գոռաղադինայ ֆորսկասի մէկք դ Ա Ր Ա Ն  
Հինգ սհաթ խոտել թվանքի ոռքը,  
Աչքը ջուր կտրել ու բուսու մտել:  
Հէնց էն էր ուզում մէկ զուշ սպանիլ:  
Մօլի մարաքէն զուշը որ տեսաւ,  
Բարով մնա՞ ասեց ֆորսկանին՝ թռաւ:  
Ֆորսկանի աչքը կայծակին տվեց,  
Մօլին պար գալիս որ տեսաւ, վազեց,  
Թվանքի լուլէն միջիցն ճոր էլաւ,  
Էնպէս նրա գլխին սաստիկ վրայ էկաւ:  
Խեղճ Մօլին էլ եդ՝ զլուխը լաց էլաւ,  
Էլ եդ իր զուռնէն փրչեց, ու ասաւ:  
Որ էն օրհնածը գլխին խելք դնի,  
Ի՞նչ անի, որ էլ բալի տակ ընկնի:

«Տօ տանվար՝ չըլումն ախր ո՞վ պար կըդայ՝

ի՞նչ ծուխ ա մտելքիթղ՝ քեզ դաղում ա:

Տեսար զուշն նատած՝ զըդակըդ վեր առ,

Կուզէկուզ ընկիր դաշտ, ու ձոր ու սար :

Ո՛չ զուշ կփախչե, ո՛չ գու կժագվիս,

Ես ի՞նչ բերիր դու էս օր իմ զլիսիս:—

Մօլլի գլուխը հաստ, ու ծուծը բարակ.

Ճամփին էլ կերած էնքան տուր, քօթակ,

Աաղ զուռանն փորումն, կարթացող տեղեակ.

Փէշերն վեր քաշեց, դրեց կունատակն

Զարդիւծ զայլանը ու գզած գդակն.

Փիր ու փեղամբար կանչելով՝ ընկաւ

Ճամփին կուզէկուզ մէջքը կոտրելով.

Կնկանն, զանքաշին օրհնութիւն տալով

իր հարամ փորն էլ հետն անիծելով,

Հենց մէկ բաղի մօտ հասաւ, տնքալով:

Բաղմանչին հինգ օր աչքը չէր կպցրել.

Գիշեր ու ցերեկ զարթուն մնացել:

Որ գողը բռնի, հախիցը վեր գայ:

Կուզ Մօլլին տեսաւ հինց բիրազի նա,

Չս ա իմ գողը, որ օրը ճաշին

Եսպէս վախում ա, զընամ, նրա հոգին

Հանեմ, վեր ածեմ, որ էլ միւսանդամ

Զըգայ՝ թէ ինքս էլ որ նըրան ձէն տամ:»

Աստուած իմանայ, թէ ո՞րքան թագեց,

Տունն էլ հեռու չէր, նրա բախտը բանեց:

Գնացին դատաստան, որ գանգատ անեն,

Մօլլի վերջի կարգն էս օր կատարեն:

Բաղմանչին սկսեց իր զուռնէն փշել,

Ախունդն Մօլլի կճուծն լաւ ձեռնահարել:

Տեսաւ մէջը փուշ էլ հատիկ չկայ,  
Արձակեց Մօլլին՝ որ իր տունն գնայ :  
Էնքան ծեծվել էր անձարն ու ջարդվել,  
Որ ջանումն էլ սաղ տեղ չէր մնացել:  
Քանի առնում էր դեղն ու մշլամբ,  
Ու միտքը բերում կերածի համբ,  
Վայ էր կանչում ու դօշին վեր հատում,  
«Ով էս աշխարքումն, անիծած տեղումն  
Ամէնի խօսքին միշտ անկաջ կանի,  
Մէկ գըլուխ ու թռող՝ երկու ձեռք անի»:—

## Երկաթակեր մուկն ու աղքատ հարուստը:

Փողն ա բան տեսնում էս մեր աշխարքումն  
Գեղցցու խօսք ա, հօ ևս չեմ ասում,  
Բայց խիստ հէսարի,  
Ով բանը չափի:

Մահն էկաւ դուռը մէկ հարուստ մարդի.  
Խեղճն ունէր հէնց մէկ բէդովլաթ որդի :  
Կանչեց նրան մօտն, խելք դրսեց զլխին.  
«Գիտեմ; որ ասեց՝ իմ դատած մալին  
Ղաղըլը չես անիլ կուտես, կմարսես,  
Վերջն դռնէդուռ՝ հաց պէտք է ուղես :  
Արի, խրատըս գետինն մի՛ քցիր,  
Երբ էս օրին դու հասնիս, գօմն մտիր,  
Պարանը քցիր էն մեծ սնի արանքն,  
Կախվեր, ու խեղպվեր, թէ ատես քո կեանքն:»—

Շաբաթ չըքաշեց, որ հէրը թաղեց.  
Մէկ մարդ աշխարքումն էլ նա չըթողեց:  
Սազանդար ասես, գմբակ ու դայրայ.  
Էլ դափ ու զուռնայ, չմընաց, մօյդայ,  
Բարեկամներին գլխին հաւաքած,  
Փորի հետն ընկաւ, քէֆ արեց, ցնծաց:  
Էս անիրաւներն էլ էնպէս էին  
Նրա զուղը քամել ու նըստել ուսին,  
Օրը հազար անգամ գլխովը երդվում,  
Ու անոշ խօսքով հետն էլ լաւ եղում,  
Որ հէնց էր կարծում էն ողորմելին,  
Թէ ի՞ր ձեռին ա նրանց սուրբ հոգին :—  
Բայց ո՞ւմ չի էսպէս փորի բարեկամ  
Բաստ էկել որ նոր ես բանը շուռ տամ:  
Հէնց դանը հատաւ, ջաղացն էլ կանգնեց,  
Ով էլ հաց ունէր, իր դարդը քաշեց:  
Փորի տակն ընկաւ հէնց ջուլ ու փալանն,  
Էլ ով էր գիծ՝ որ մօտիկ դայ նրան :  
Բարեկամները տաշտաքերանիքն էլ  
Որ լաւ մարսեցին, պարկը թափ տվին,  
Տիկը մզեցին, ջանը հանեցին,  
Բերան ու միրուք թամուղ սրբեցին,  
Խաւակնելով ղըրաղ քաշվեցին,  
Զեռը լուացին :  
Ո՛չ թէ բարով տալ կամ կշտովն անցնիլ  
Նրանիք լայեաղ չէին անում, կամ խօսիլ:  
Մէկ բան ասէլիս էլ հրհում էին,  
Ծափ տալիս, խնդում, ծաղը անում խղճին :  
Մէկ օր էլ տեսան, մաշիքը ծակ էր:  
Միւս շորերն հօ ձեռից ընկել էր :

Որ չասեց՝ թէ մուկն ա մաշիքն ծակել  
գէլը կատաղեց, էնպէս ծաղը անիլ՝  
Քա՛րը կը պատռէր, ի՞նչ թէ նըրա սիրոբ,  
Որ էլ տեղ չունէր, ծածկի իր դարդը։

Դանակն օսկոռին էկել էր, հասել  
Մէկ անուն ունէր, էն էլ նա կոտրել։  
Հօր տրված խրամն խկոյն միտքն ընկաւ,  
Սիրտն արնով լիքը հէնց որ առւն էկաւ.  
Մէկ թօգ վեր առաւ ու գօմը վազեց,  
Հօր հոգին յիշեց, իր օրն անիծեց,  
Էլ հոգի, հաւատ ի՞նչ միտքը կը դար,  
Որ մեղայ ասէր, եա իր մեղքը լար։  
Թօկի ծէրը որ նա չե՛ բարձրացըեց,  
Գերանի արանքն ուժով որ խրեց,  
Յանկարծ մէկ տօբրակ էնպէս շըրխկաց  
Առաջին, որ աչքն վրէն մնաց սառած։  
Ում էն հաղաղին պատահի յանկարծ  
էսպէս բան, որ խելքն էլ վըրէն մնայ,  
Նոր հողի չառնի, նոր սիրա ըստանայ։

Բարի հօր միտքը նա նոր իմացաւ,  
Վեր առաւ փողը, հետը տուն տարաւ։  
Օրէց օր էլ եղ ոտն ու գլուխն զըզեց,  
Բարեկամների տուտն էլ եղ բացվեց։  
Բայց էն շատ վաղ էր, որ էշը կաղ էր,  
Էս մահվան դին էր, իշտահի բան չէր։  
Նոր շինացածը մկան յիշատակը  
Մըրքումն պահելով, ու իր առակը.  
Մէկ օր էլ նրանց եղ զօնաղ արեց,  
Հաղար բարաթ բան պատրաստիլ տվեց։

Որ կերան, խմեցին, քէֆներն չաղացաւ,  
«Պատուելի իշխանք՝ բերանն բաց արաւ,  
Աշխարքումն հրաշք շատ է պատահել  
Բայց Աստծու խաթեր՝ ինձ խնդրեմ ասել  
Ո՞վ է լըսել թէ անիրաւ մուկը

Թողած հաւի միան, շաքարն ու ձուկը,  
Երկաթի խօփի կէսը էնպէս կըրծի.  
Որ տեսնողի աչքն բաց մընայ, սառչի»:—

— «Կըլի, շատ կըլի, Աղայ» ձէն տվին  
Նրանք հազար տեղից, խօսքը զորդեցին :—  
— «Երկաթ ու մուկը»:— Տղէրք՝ դուս էկէք,  
Մուկը որ մաշիք կարող չի ծակիլ  
Նա ի՞նչպէս կարաց էրկաթը ծամիլ»:—  
Դուռը փակած էր, տղէրքը կանգնած,  
Կէտի, դադանակ ձեռներին բըռնած :

Ղորդ ա, կերած հացն նա հարամ արեց,  
Որ հալալ տեղ չէր, խիստ շատ լաւ արեց :  
Հիմիկ մարդիք որ իրանց խէրն ուզեն,  
Էսպէս բարեկամ չուղեն, ռադ անեն,  
Գանի՞ էսպէս ճաշ պէտքէ պատրաստած,  
Գանըսի՞ մաշիքն առաջը դրած :  
Գանի փող ունիս, մուկդ երկաթ կուտի,  
Զեռդդ պակսէլիս՝ մաշիի չի դիպչի :—

### Հացակեր վիշը:

Անիրաւ աշխարքն ախր ով չդիտի,  
Որ լաւ շորին միշտ զըլուկս վիրբերի.

Մէկ սարում, չօլում մեծացած օմքին,  
Որ դեռ չէր խաբար աշխարքի բանին,

Եկաւ մէկ քաղաք. չունքի հարուստ էր,  
Տեսաւ՝ ամէն մարդ որ զարդարված էր,  
Ի՞քն էլ սկսեց խասից, զումաշեց  
Մէկ ձեռք շոր կտրիլ. ու ոսկու թելից  
Եախէն էլ կարիլ: Տեսնողի աչքը  
Հետը գնում էր, ու նրա փառքը  
Է՞նպ՛ս մեծացաւ, որ մեծ ու պստիկ  
Ո՛չ ցերեկն էին տալիս նրան մարդիք  
Ո՛չ զիշերն հանգիստ. ու տանը թողում:  
Հացի կանչում նրան, իրար ձեռից խլում:  
«Չունքի փալանը նոր էր ու թազայ,»  
«Ո՞վ չէր տալ պատիւ նրան համեշայ:»

Նա լսել էր, որ քաղաքի մարդը  
Հացի քօռ կըլի. ու էս մսհբաթը  
Որ տեսաւ, մտքումն խիստ շատ զարմացաւ:  
Հբեշտակ են նրանք, էնպէս իմացաւ:  
Քիչ էր մնացել իր էլած խելքն էլ  
Տանիլ տայ. ջէրն հօ՝ վաղուց դարդակվել:  
Շուտով զգաստացաւ, խելքը ժողովեց,  
Մէկ փորձեմ սըրանց, մտքումն ասեց,

Ու շորը փոխեց :

Քիչքիչ գդակի փօստն դուս էկաւ ծէրիցը.  
Մաշկի տակն էլ կախ մնացել կըլնկիցը:  
Չուխի հօ՝ ամէն մէկ թեն ու եախէն  
Էնպէս զզդզվել քըճըճվել ամէն,  
Որ ուսերն ու լաշն բաց էին մնացել:  
Հազար կարկատան քամակին կըպել:  
Էլ ո՞վ էր գիժը. որ հաց տար, նըրան  
Բարի լիս տալն էլ ամօթ էր իրան:

Էս փորձն որ տեսաւ, խելքը տեղն էկաւ,  
Քիչքիչ ոտ ու գլուխ նորեց, զուգվեցաւ.  
Տեսնողն անկաջի տակը քորելով.  
Ուսերն քաշելով, քուցին անելով.  
Տեսաւ նրա աչքը որ լիս ա էկել  
Ակսեց սուփրէն նորէն բաց անել:  
  
Ի՞չ տուն որ նրան սըմթայ կանչեցին.  
Հետն էլ շատ զօնաղը մեծ մարդիք կացին:  
Սուփրէն որ նրանիք բաց արին, նատեցին.  
Հայ ու կերակուր առաջներն դըրին:  
Ամէնն էլ իր ձեռն ամանին տվեց,  
Փորը հօ վաղ էր նրանց անում վեց վեց:  
Աման ու բերան ճամփին բաց արին:  
Մեր նոր զօնաղին հըլայ մտիկ չարին:  
Գանի շիլավլան տաք տաք էր դրած.  
Տոլմէն, լաշլամէն որ դեռ չէր էկած,  
Յանկարծ մէկի աչքն ընկաւ նրբա վրայ.  
Տեսաւ որ փէշն է ձեռին բռնել նա.  
Ամանի պոնկին դընում ու ասում,  
«Փէշ՝ հաց կեր, քէֆով, ի՞նչ ես վախենում,  
Քեղ են էս պատիւն տալիս էս մարդիք,  
Ի՞նձ հօ չեն սիրում էս շատ պատուելիք:  
Կեր ու գլուխը առ, փախչինիք սրանցից:  
Թէ չէ տրված հացն կառնին մեղանից.  
Դու որ կտրատվիս, ոչինչ դարդ չունիմ,  
Ես կմնամ ցխումն, էստոց ես փախչիմ.  
Մարդին մարդ շինողն որ շորն է էլած.  
Գնանիք մեր սարը, անիծվէ էս հացն :—

## Օառերն ու Կացինը :

Օառերն որ մէշումն խիստ շատ զվելն էկան  
կացնի ձեռիցը, ու էլ չիմացան,  
ի՞նչ անեն, իրանց գլուխը պահեն,  
Խորհուրդ արին, մէկ ճար իրանց անեն :  
«Կացինն ի՞նչ զատ ա, որ մեղքեար անի»,  
Զէն տվեց նրանց, մէկը ծառերի :  
«Մենք որ կոթ չտանք, կացինը կարայ  
Մեղվնաս տայ, կամ հէջ մեղ մօտանայ»;  
Թող իմացողը ինքը իմանայ,  
Ու նշախ տեղը կացնի կոթ չտայ :  
Թէ չէ սկիզբը իրան կկտրի,  
Ցետոյ փոշմանին բանի պէտքը չի:

## Չըլլեխը: (Բամբակի հունդը հանելու հաջաթ.)

Մէկ Քըրդըստանցի անմեղ Հայ մշակ  
Տուն ու տեղ թողած՝ էկաւ մէկ քաղաք,  
Որ ըղըեխ քաշի, մի քիչ փող դատի,  
Գնայ, որ իր խեղճ օղլուշաղն պահի :  
Չըլլեխի անունն էր մէնակ լըսել,  
Աչքով չէր տեսել, հունարն իմացել:  
Չըլլեխ ու տըլլեխ հէնց գիտէր մէկ ա,  
Միտքը մոլորված՝ նա քուչայ քուչայ  
Որ ման էր գալիս, մէկ մարդ ռաստ էկաւ,  
Աչքիցն ու ունքից նա չափեց, տեսաւ,  
Որ էս օրհնածն իր ատամի խարջ ա:  
«Ախպար՝ քո խօսքուն զուրբան եղնիմ՝ Խայ».  
Չըլլեխն՝ օր կըսեն, էս իմալ զատ ա :

« Զօջուղ ու լաջերս տուն եմ վորնդել. »  
« Զըմէն ֆուխարայ մեր օլքէն թորգել. »  
« Քալել էս վալիսաթն, որ չըղբեխ քաշեմ. »  
« Տանիմ զիմ քուլվաթն պախեմ. կերակրեմ »:—

Սատանայ մարդին գազ կշեռք պէտք չե՞,  
Աչքով նա մարդի խելքը կը չափի :  
Գըլխին խելք դըրեց, որ գնայ, մոմ առնի,  
Տանի չըղբեխի չորս կողմը վառի.  
Առաջին չօքի, դէմը համբուրի,  
Դէմը չըղբեխի կոթը պարտի :—  
Շուտով վաղըվազ գնաց, մմերն առաւ,  
Ու արդար սրտով նա իր ուխտն էկաւ :  
Ինչպէս ասել էր, մմերը վառեց,  
Զօքեց առաջին ու խաչակնքեց :  
Բայց վայ նրա օրին. կոթն էլ որ չքաշեց,  
Էն դաստայ միրուքն էլ հետը ծալվեց :  
Ի՞նչ վնաս ունի, միրուքն ով կուտի.  
Չըղբեխն կատու չէր, որ երեսն չանգոի :—

Խեղձ Քրդստանցին էնապէս խմացաւ,  
Թէ դեռ չըղբեխի վախտը չի հասաւ,  
Որ մուրազը տայ, իրան ռադ անի,  
Զօքելով էլ՝ ջուրն էկաւ ծնկների :  
Առաջ հլայ կամաց սկսեց ասիլ.  
Եսաման սուրբ չըղբեխ՝ քղի եմ խանչել  
« Զիմ մօրուս սալաղ՝ քեզ ապաւինել: »  
« Թորդ զիմ մօրուս, թորդ՝ քեզ ղուրբան եղնիմ: »  
« Թորդ, — թորդ — հայ եսաման՝ արևուդ մեռնիմ: »  
« Քղի մէկ ուշ մը ես մատաղ կէնեմ: »,  
« Զիմ մօրուսը թորդ, որ խազանջ էնեմ: »:—

Զըղբեխ ի՞նչ տեղ էր Քրդէվար սովըել,

Որ կարենար նրա աղօթքը լրսել:

Նօյմաղօչում դու մեր Քրդատանցի,

Գիտ կովի նման կաթրդ շուռ ածի,

Թորդ, թորդ ասելով որ զարք չի արեց:

Զքո շենօղի խէրը անիծեմ,

Զքո բունիաթի փիրը նղովեմ,

Խուլ մի, գէշ խաջաթ խմայ մէջ ձգել.

Ռւխտ կըսեն. էրէ. գլխուն խուզել.

Զմլայ դմբլակի պտուղն խաւարի,

Մեր սաքվի քեօթուկն էստուց աղէկ կըւի:—

Ասեց ու հետը միրուքը քաշեց.

Թասիէթափ տալով պռօշը կծեց:

Զըղբեխը մընաց միրքիցն ծօլուկ,

Անէծք ու օրհնանք խառնեց մեր մշակն:

Զըղբեխն անէծքին ի՞նչ մտիկ տար.

Թէ գլուխն էլ հետը մեր Քրդի պոկ գար:

Ընչանք անիծածն թողեց խէրն ուշառը

Միրքի կէսն ու բեղն հէսց էնպէս ձար, ձար

Պոկեց. պլոկեց, տարաւ Քրդի չարը:—

Աստուած ո՞չ տայ մարդ էնպէս տեղ ընկնի,

Որ խըրատ տվօղն էլ սատանայ ըլի:

Թէ չէ էն չղբեխն կըկապեն միրքիդ,

Որ չես պրծնիլ թէ տաս էլ հոգիդ:

### Բաքմագ (բաղագ) ծախօղն ու Սալդատը:

Սալդաթի մէկը մէկ դուքան մտաւ,

Բաքմագ կուզէր նա սունի, ու տեսաւ,

Ծախօղի մէկ աչքն վաղուց քօռացել

Ի՞նչ անէր սալդաթն, շատ քիչ էր փողն էլ:

Ընչանք բախկալը՝ իր քօռ աչքովը  
Գրվանքայ, կշեռք բաքմազն գդալով  
Մէջտան կըքերէր, չափ ու ձեւ կանէր,  
Պակասն, աւելին գլխիցն վեր կառնէր՝  
Սալդաթի ձեռը փլաւ չեր ուտում,  
Ուրիշ մարդ էլ խօմ՝ չկար դուքանումն :  
Մէկ շէրէփ լեքը բաքմազ վերցրեց,  
Էնպէս բախկալի սաղ աչքին խըփեց,  
Որ ընչանք նա իր գլուխը լաց կըւէր,  
Որուսվայ երեսն ու աչքը կըսրբէր,  
Սալդաթն սազ կծուճն բաքմազն վեր առաւ,  
Էն գընալն էր, որ գընաց, եղ չէկաւ :  
Բանն ընչանք բանի վերջը կհասնի,  
Գողը՝ քարվանը կըտայ, կըտանի.  
Թէ աչքդ էլ քօռ է, սարհէսար բանիդ  
Կաց, թէ չէ էլած ջուր կդառնայ ձեռիդ :

### Ճրագով ման գտլը:

Աշխարքիս բանը էսպէս էկել ա,  
Էսպէս գնացել մարդ ի՞նչ իր գլուխը լայ :  
Առաջնի ղազը մենք չենք խմանալ,  
Ընչանք եղինը իրան չի ցոյց տալ :

Մէկ գեղում մէկ չայ սարքար կարգեցին,  
Գեղըցիք իրանց բարեբար մարդին  
Պատիւ ըստալով, որ չէր անց կէնում,  
Որ Խանի դռանն, կամ դիւանխանումն  
Գանգատ չի անեն, որ նրան փոխի,  
Իրանց վրայ մէկ նոր՝ Թուըք սարքար կարգի :  
Խանը խրատեց, նըրանք չիմացան,  
Սարքարին փոխեց, ապա դինջացան :

Հաւատի դուշմանն զամշին քամակին,

Նօքարն եղեին, Վառաշն առաջին

Փէդ ու միս արեց, նրանց հոգին առաւ,

Էլ սում ասէին, մէկն էլ չխմացաւ :

Մէկ ծեր մարդ նըրանց գլխին խելք դրեց,

Գիշերն որ էկաւ, մամ վառիլ տվեց,

Բոլոր գեղրցոնցն ու բուռայ քուչայ՝

Սաղ գիշերն էսպէս մեծ ու երեխայ

Ման էկան, մինչեւ օրը լուսացաւ,

Խանն իր քօշկիցը բոլորը տեսաւ,

Որ կանչել տվեց, պատճառն խմանայ,

Խելօք հալկորն, բան տեսած՝ ուստայ :

«Քո գլխին զուրբան՝ Խանին արդ արեց,

«Ասած խրատը որ մեզ քեար չարեց,

Ճրագով ընկանք բոլորս տնէտուն,

Որ գտնենք մեր հին սարքարի բուտուն

Սևերես մարդին ի՞նչ խօսք կը կըհասնի,

Նորն ընչանք չըգայ, հինն խմացվել չի՝ —

Խանն նըրանց գլուխն մէկ լաւ էլ լուաց,

Ու էլ եղ կարգեց հին սարքարն փոխած :

## Չու գողացողը

Չու գողացողը ձի կը գողանայ.

Թոնդ լսողն զլխին լաւ մուղաթ կէնայ :

Անմեղ երեխի մինն դեռ աշխարի

Ո՛չ ցաւը գիտէր, ո՛չ չարն, ո՛չ բարի,

Ընկած իր քէֆին, իր քաղցը արեւի

Զէնն ածելով միշտ շրջէր տուն, այդի.

Ծառերի տակին զշերի ձէնին

Մայիլ մնացած՝ աչքի տեսածին :

Ով մէկ քաղցր աչքով նայում էր նըրան,

Ով մէկ անոշ խօսք հէնց դընում բերան,

Էնպէս էր կարծում. թէ իր ախպէրն ա.

Ուզում էր հոգին հանի նըրան տայ :

Ո՛չ պատժի համը, ո՛չ մեղքի ձէնը

Դեռ չէր իմացել որ պահի ջանը :

Ինչ մէրն ասում էր. էն էր կատարում,

Նըրա բերնի խօսքն ու ասածն անում :

Յանկարծ մէկ օր էլ հարեւանի տանն

Խաղալիս՝ դտաւ մէկ ձու նա բիրդան :

Ձու ու երեխայ՝ ի՞նչպէս չէր խարվիլ :

Մէրն ուրախ ուրախ ձուն ձեռիցն առաւ.

Ճակատը պաշեց ու խըրատ տուաւ :

«Քո ջանին մեռնիմ, խէլօք տղէն էն ա.

Որ գըրսիցը՝ հէջ ձեռը դարդակ չգայ :

Եղպէս ղայրաթով կաց, շարբդ տանիմ:

Որ ևս էլ մի քիչ ալս՝ լսու օր տեսնիմ :»—

Բայց վայ էն մօրը, որ իր երեխին

Խսպէս խրատի, ծախի իր հոգին :

Երեխի բերանն էն լազաթն ընկաւ,

Որ գազան ղառաւ, քանի մեծացաւ :

Հանդ ու հարեւան, բաղեր ու բօստան

Նըրա գող ձեռիցն ամանը էկան :

Դուքան, տուն կտրիլ ապրանք փախցընիլ.

Փարվան թալանիլ ճամփորթ սպանիլ.

Փէշակ դառաւ նրան : Ու աղեղ մէրը

Քանի բերում էր, էնքան իր սէրը

Աւելցընում էր, որդուն խրբառում,  
Տեղն էկած վախտը ինքն էլ էր անում:  
Բայց ով ուզէնայ, Փորի մէջ ընկնի,  
Գըլուխը կջարդի, կամ ոտն կըկոտրի:  
Էսպէս էլ էլաւ մեր գողի բանը  
Մէկ օր էլ ուզեց, որ Խանի տանը  
Քեահլան ձին կապած՝ դուս քաշի, տանի,  
Զին տանելու տեղ ինքն հասաւ բալի:—  
Թողլիմարք ասեն՝ թէ «մեր ճակատին»  
«ինչ գըրված որ ա, էն կգայ մեր գլխին»:  
Ով էսպէս գըրեց, ձեռք չորանայ,  
Ճակատն ի՞նչ իր գլուխն ու արել լայ,  
Որ մարդ ինքն իրան զաղարի կըտայ:  
Փիս խրատներով ճամփից դուս կըդայ:—  
Խանին էլ խնդիր անող ով կըւէր:  
Մեր Ասիացիք չեն էնսպէս կեռմեռ,  
Ու դատաստանը շուտով վերջացնում,  
Կամ գլուխ կտրում, կամ աչքերն հանում:  
Երկար պարանը որ չըճգեցին,  
Մեր զօչաղ գողին տակին կանդնացրին,  
Որ խեղդեն նրան, նա չքեց բիրդան  
Որ կէս սհաթ էլ ա դաստուր տան նըրան,  
Իր մօրը տեսնի ու մուրազն առնի,  
Մէրն էլ իր կաթը նրան հալալ անի:

Հէնց մէրն մօտացաւ՝ լալով, սքալով,  
Որդին ճոռվն ընկաւ՝ դօշը ծեծելով,  
Բայց ա՛խ տեսնողի գլխին կրակ վառվեց,  
Որ անսիրտ որդին մօրն երբ փաթութվեց,  
Ծիծն առաւ բերանն էնսպէս սաստիկ կծեց.

Որ տեղից պոկ գալն ու մօր հոգին տալն  
 Երկար ժամանակ էլ հէջ չքաշեց :—  
 Թուր էր, քաշեցին, քար էր, վերցրին.  
 Գողի՝ տեղն ու տեղն որ հանեն հոգին :  
 Նա անահամավախ՝ իր կիսահոգի  
 Մօր լաշին քցեց աչքն ու բիրադի  
 Զէն տվեց խալխինն; Տեսէք՝ ջամըհայթ՝  
 Լացէք իմ գըլուխն ու բարի խրատ  
 Տըլէք ձեր որդոցն, որ էս դադարին  
 Զի հանդիպին ու ձեր անբախտ գըլ խին  
 Անէծք չըթափեն, իրանց պահպանեն :  
 Գեռքէգեռ ըլիս՝ անիրաւ իմ մէր,  
 Էս էն մէկ ձմի լազաթն ու խրատն էր,  
 Որ գու ինձ տվեր, էս տեղն քըցեցիր,  
 Երկուսիս հոգին դժոխքի փայ արիր» :—  
 Ասեց ու թուրը մէկիցը խըլեց,  
 Ընչանք որ հասան, նա իր սիրտն ցցեց և  
 Ու մնանէլիս էլ շունչն էստով կտրեց :  
 «Վայ էն հօրնը մօրն, որ որդի պահի,  
 Ու ոչ խրատ տայ, ոչ էլլաւ կրթի» —

---

ԱՌԱՋՊԵԼՔ :

## Ժանդ փուշը:

Փրշին հարցրին՝ թէ ի՞նչ խէր ունիս,  
 Որ քարվանի բեռն մօտովդ անցնէլիս,  
 Էլլուրդ ու բամբակ դու չես հարցնում,  
 Միշտ քաշում, պկում, բեռն խարար անում,  
 «Խէրն ի՞նչ եմ անում. պատասխան տվեց  
 Անիծած փուշը ու գլուխը ցցեց :

«Խեր ուզեցողը՝ խեր էլ պէտքէ տայ,

իմ սրբափ ուզածն էս չի մէկն էլ ա:

Էնդով ա հէնց իմ սիրտըս հովանում»: —

Որ ուրշի տունն ևմ ես էաբէս քանդում»: —

Էսպէս տուն քանդող փշեր խիստ շատ կան,

Երանի՞ նըրանց մէկ օր կրակին տան:

### Յորթն ու խոզը:

Կով ու խոզ մէկ մարդ իր թաւլէն արած՝

Կովին գարման էլ չի ածում առաջն:

Խոզին թեփ, գարի տալիս, չաղացնում:

Ֆորթն էս անիրաւ գործքը որ տեսաւ,

Մօրը գանգատվեց ու մէկ օր ասաւ,

«Ախըս կաթն ու եղ, մածունն էլ հետը

Հօ մեզանից ա ստանում մարդը.

Էս ի՞նչպէս բան ա, մեր միսն էլ ուտում,

Ել էս խոզին ընդունում, սիրում»: —

«Համբերի՞ր՝ որդի՞ վերջը կըտեսնիս».

Մէրն ասեց նըրան», ու լսիր խօսքիս,

Մարդն էն բարեսիրտ կենդանուցը չի,

Որ նըհախ տեղը լաւութիւն անի:

Դըրայ հէսաբը մէկ օր կպահանջին.

Թող մեզ խոտ տան ու մեզ մըտիկ չանեն»: —

Մէկ օր էլ ֆորթի ջանը դող ընկաւ,

Որ լսեց դռանն՝ ինչ ձզոց էկաւ:

«Էս ի՞նչ խարար էս, մօրը հարցըց»: —

— «Գարու հէսաբն էս: — նա պատսսխանեց :

Թող անոշ թիբին մարդ հէչ չի խարվի».

Քըթից կըհանեն, ինչ օր որ ըւի: —

## Ե՞ն ու շունը :

Ամառվայ էն շատ շոք ժամանակին  
Խեղջ իշե մէկը իր բեռի տակին  
Կանգնել էր անսաս մէկ մեծ մէյդանում:  
Քիթ ու պրունկը քաշ՝ խոր միտք էր անում:  
Չար ճանձերն էլ հէնց վախտ էին ճարել.  
Էլ պոչ ու անկաջ նրանք չէին թողել  
Ուր համնում էին, կրծում, ցաւացնում,  
Իշե դարդերը դըհայ շատացնում:

Մէկ շուն էն կողմիցն՝ շրվաք տեղն ընկած,  
Իշե չարչարանքն տեսաւ ու ասաց,  
Այ ողորմելի՝ քեզ ով էր ասում,  
Որ եախէդ ձեռ տաս ու մընաս բայում:  
Էն գլուխն ու անկաջն, էն ձէնն ու գոռալն,  
Որ դուք ունեք, ու էն սիրուն ման գալն.  
Թագաւորի դուք լայեաղ կըլէիք,  
Էլ չօռն ու ցաւը դուք տանիլ չէիք,  
Թէ մէկ դանգի չափ խելք ունէնայիք,  
Չեր գըլուխն ձեռի տակ շըքըցէիք:

Մարդի առաջին քանի որ կուչ դաս.  
Գըլեխիդ կընստի, թէ լաւ իմանաս :

## Սոխն ու Սիսորը :

Այ թէ քօռուղում, դու հոտած զատ ես,  
Ժանգի պարկի պէս լըցվել, տռըզել ես»:—

Մէկ օր սրխատորը էսպէս խօսք քըթից,

Խեղճ սոխի գըլխին թուք ու մուր ածեց ։

«Կոկըդդ հաստացել. գլուխըդ գիրացել.

Ի՞նչ ես դու էղպէս շատ ուռել, փըքիկ ։

Ինչ պտուղ որ ես, քեզ ովչչի գիտի.

Որ ուզում ես՝ թէ հէնց քեզ տեղըլի ։

Մարդ քեզ ուտէլիս, բերանն ես կըծում,

Դանակ դիպչելիս՝ աչքը քօւացնում:

Զեմ գիտում՝ մարդը ախր ի՞նչ լազաթ ա

Քեզանից տեսնում, որ քեզ ցանում ա :

Ել մարդ ու բօստան հէջ չի մընացել.

Բոլոր գէշ հոտովդ բռնել, հոտացրել :

Ընչանք չեն էփում, քո աչքըդ հանում,

Դու քո փիս հոտը չես պակացնում ։—

«Տօ դու քո Աստուածն՝ ով ել ինչ ասին

Խօսքը սազ կը գայ, իրաւունք ունին։—

Սոխը ջուզաբը եղ դարցրեց, ասաց :

«Ե՞ղ էր մընացել փանք քեզ՝ Տէր Աստուած.

Որ դո՞ւ ել ըռեխտ ցրվես ինձ վըայ :

Տօ այ անզգամ, հոտած. բէհայեայ.

Էփէլիս էլ ա ես հոտս քաշում եմ.

Մարդի բերանը ապականում չեմ:

Քո՞ գլուխը լաս՝ որ խաշե միջումն

ի՞ն հոտն ես թողում, ուտողի բերնումն.

Որ մօտի կանզնողն իրանից գնում,

Սիրաը խառնը վում: ու քեալէն ծակվում:—

Գիտե՞ս՝ խնամի՝ իմ միտքըս ի՞նչ ա,

Ես չեմ ուրանում, իմ հոտըս փիս ա :

Արի, դու ելքո չափը ճանաչիր,

Խօսքիս լիիր ու լեզուդ քեզ պահիր :

Երկուսս էլ ունինք էդ պահասութիւնն  
Մենք մերը ծածկենք, ու պահենք թափուն :  
Մենք իրար վասն որ ասենք մեր լեզվով,  
Խայտառակ կը լինք, կմնանք ամօթով :—  
Էսպէս սոխ, սխտոր հոտած մարդբերքն  
Լաւ կանեն, իրանց այիբն որ ծածկեն :  
Բայց շատ անգամ որ էսպէս սխտոր մարդ  
Բերանը բանում չի ու վախտ բեվախտ  
Ուրշեն փուդ դնում, էս ա մեզ էրում,  
Էս մեզ խորովում :

## Աղուէսն ու գէլը :

Վայ էն մարդին, որ էսպէս տեղ ընկնի,

Որ գրի, արզի մտիկ տվող չըլի :

Մարդի սաղ սաղ էլ որ ուտեն, սպանեն,

Մէկ սիրտ չի ցաւիլ, կաշին էլ հանեն,

Աղուէսն խորամանկ մէկ ձմեռվան օր

Սոված ման գալիս՝ նա որդիանց որ

Մէկ թուղթ գտաւ ճամփին, բերնին որ բռնած՝  
Նա ռաստ չէկաւ գիլին կատաղած :

Զանը դող ընկաւ, վախչել չկարաց :

Գլուխ տալով էկաւ մեր գիլի առաջն :

— Եդ էկած ու կապը կտրած մարդին

Ինչ պէտք է չօքիլ ուսափ առաջին :

Հազար պարզամիտ ու անեղ ուստի

Հախիցն վեր կը գայ, ով իր բանն գիտի :—

Դեռ գէլն իր իշտահն ատամի տակին

Հազրում էր, որ կնքի աղուէսին,

Սատանի ոտը բարով տալուց եղ,

Թուղթը բաց արեց, կարթաց նրա հետ,

Որ ինչ տեղ գնայ, տասը ճուտ ու հաւ

Տան իրան. էնպէս Խանն հրաման արաւ :

Գիլի փոր, աղեք էն կատուն ընկաւ,

Որ էս լսեց : Տէր աղուէսին առաւ,

«Ֆառաշչի պէտքը, որ հարին հաւաքի,

Եղ գործն էլ թող դու՝ իմ վզիս ըլի :

Բանը թամամեց: Երկուսն էլ հասան

Իրանց մուրազին ու ընկեր դառան :

Գալով, զրից տալով, խորհուրդ անելով,

Հէնց էկան, հասան մէկ մեծ գեղի քով.

Աղուէսն մէկ սարի ծէրի վրայ կանգնեց.

Իր գէլ ֆառաշին տանդրոչ մօտ զրկեց:

Գէլ գիշերն էլ գեղից կիախչի,

Ուր մնայ ցերեկն ու օրը ճաշի:

Ամա հրամանն տեսաւ որ ունի,

Դունչն էլ մէկ կէս գաղնա բարձր ցցած՝

Մըտաւ գեղի մշն անահ, անկասկած :

Գեղ ու գէլ ու շուն—էն էլ էն սհաթին.

Էլ ի՞նչ կհարցնէր շների ուղբաշին :

Հէնց որ բուրդ ու մազլաւ գզգեցին.

Ու շատն ատամն էլ հասցըց մօին,

Մեր Աղուէս Խանը սկսեց ձէն տալ

Տանդրոչը թուղթը տալ ու տուն գնալ :

Խեղձ գիլի հոգին բերանն էր հասել,

Հէնց էն կարաց նա Աղուէսին ասել :

«Աստուած քո տունը քանդի քո գլխին,

Ինչպէս ինձ հասցըիր դու էս սհաթին.

Գլխիդ քար ընկնի.

ի՞նչ թուղթ, ի՞նչ հրաման, կամ ի՞նչ տանուտէր  
Անիծվե՛քո սօյն, էս ի՞նչ իմ բան էր։  
Հազար շուն կան, որ ո՞չ գրիլ դիտեն.  
Ո՞չ գրի զօրութիւն, որ ասածս լսեն։  
Դուշմանիս չգայ, ինչ իմ գլուխն էկաւ.  
Ով որ իմանայ էս իմ դաւն ու ցաւ,  
Խորամանկ մարդիցն զլուխը պահի.  
Տեսնէլիս՝ աչքը եղելք քցի։—

## Աղի գնացող աշառը։

Մարդ օր մէկ բան արած չի ըլում,  
Ամէն բան աչքին խաղ է երեսում։  
Զահել մարդը հօ ինչ որ ասում էս,  
Անկաջվեր անում, շուռ տալի երես։

Մէկ թարաքեամայ մէկ քանի աշառ  
Առաջն էր արել գնում աղի սար։  
Խոտ կերած աշառ՝ էճակէս դուզ մէյլան։  
Քամին էլ որ քիթն չի, մտաւ բիրդան։  
Էլ տիրոնչ ռխին չի մտիկ արին։  
Պոչ ու գլուխ ցցած՝ նրանկը զու քաշեցին։  
Տիրոնչ հոգին հօ՝ բողազն հասցըին։  
Էնքան դէս ու դէն՝ խաղ տրտինդ արին։  
Բիրդան մէկ չօլում մէկ քանի եղը  
Նրանց ռաստ էկան, կտրեցին հազը։  
Ի՞նչ տեղ էք գնում՝ ախակէր՝ խէր ըլի։  
Տնքալով հարցըին։ Մեր աշառ, մոզե

Էլի իրանց խաղն նորէն սկսեցին,  
Էլի փռնչալով՝ գլխներն քամակին  
Դրած՝ քէֆը չաղ՝ պատասխան տվին :  
«Աղի՛ ենք զնում, աղի՛— ասեցին :—  
— « Գնացէք՝ Աստուած ձեր բանն յաջողի .  
Հըլայ համն առէք ձեր ասած աղի ,  
Յետոյ ձեզ կասենք, հիմիկ վախտը չին :—  
Եզերն ասեցին ու ընկան խոտի :  
Աղը որ բարձած՝ էլի եդ էկան ,  
Քամակ ու ուսեր ուռած, նրանց տեսան :  
Էլի որ հարցրին ինչ տեղից դալը ,  
Էլ ի՞նչ էր նրանց ահվալն ու հալը ,  
Ննքները ծուռ, ձէն ու շունչ կտրած  
Մէկը խոր նախան քաշէլով ասաց ,  
«Աղի՛ց ենք գալիս, աղից հէր օրհնած :  
Էլ ի՞նչ ես մեր յաւն՝ ա՞ի՞ դու անում բաց :—

### Բարդին (Հինարին) ու վտզ :

Բարդին մեր վազեն դնամիշ արեց :  
«Ի՞նչ ես կուչ էկել :— նա նրան ասեց :  
«Ես էլ որ չըլիմ, ի՞նչ կըկի քո բանն,  
Գեզ որ իմ տակիս շվաք տեղ չտամ :  
Ինձանով որ դու չգաս, վաթութվիս,  
Ի՞նչ կըլի քո հալն, էլ ի՞նչպէս կապրիս :  
Բարակ քամին էլ հոդիդ կհանի ,  
Էդպէս սև օրը՝ Աստուած տայ՝ չըլի :  
Ինձ մտիկ արա՛, տե՛ս, ուր եմ հասել  
Ինձ պէս բօյ արա՛, որ ամէն մարդ էլ

Մտիկ անելիս քեզ՝ խելքը գնայ,  
Շլինք ծռելով՝ ով պատիւ կտայ :  
Ոչ ցից ա ինձ պէտք, ոչ գերան, ձողի,  
Մէկ տուտս գեանումն, մէկը երկնքի  
Ամսի, անձրեի, քամու առաջին :  
Ճիշներս վեր քաշած, որ սուր ու կացին  
Զի հասնի, դիպչի իմ միջքին, ծէրին :  
Բայց ճեր խեղճ՝ սոյը հէնց դուս է գալիս,  
Շուտով շլինքը կախ անում, թէքվում,  
Ոտի տակ ընկնում, մէկ հով դիպչելիս,  
Գեանին չօքրչօք դէս ու դէն ընկնում :  
Ափսոս էդ պտղին, որ դուք էք տալիս,  
Մեզ էդ սազ կգար. էս բարձր ծէրիսա:—  
— «Ի՞նչ եմ անում ես՝ հաստ քօքն ու բօյը,  
Շատ բարձրանանք էլ՝ էլի մեր սոյը  
Էն սիրտը չունի, գլուխ բա ձրացնին,  
Պատասխան տվեց վազը սիրելի :  
Ո՞ւր թողանք մեր քաղցր պտուղն ու ձուխկը,  
Էլ ով կրանայ մարդի տխուր միտքը :  
Էլ ով էն աղնիւ, էն սուրբ բաժակը  
Կտայ, որ յիշեն մեռլի յիշատակը:  
Որ մենք էլ ուզենք՝ մեր պատուի խաթեր  
Քեզ պէս բարձրայնել տերեւ ու ձխիներ :  
Դորդ ա՝ քեզանով մենք փաթաթվում ենք  
Բազի անգամ ու շվաքի տեսնում ենք;  
Բաս էն էլ ասես՝ որ մեր բարի տէրը  
Չունէնայ էսքան մեր տված խէրը,  
Քեզ մէկ օր էլ ա՝ բաղում չի պահիլ :  
Լաւ չի բարեկամ՝ էսպէս զրից անիլ :

ինձ որ պահում են, փորում տակս, ջրում,

ի՞նչքան ա քեզ խէր սրանից հասնում:

ինչքան սիրտ ուզի, էնքան բարձրացիր.

Մի՛ հպարտանար, մեր ղաղըն խմացիր :

Մենք էլ որ պտուղ չտանք՝ քեզ նման,

Մեր նիւթն ու դվաթը չկորցնենք էսքան,

Ո՛չ կրկռանանք, ո՛չ կրցածանանք,

Բանից վախեցողն ու փորի գերին

Էղպէս կգիրանան, երկիրնքն կհամնին:—

Երկար բօյիցը, ու հաստ միջքիցը

Ի՞նչ խէր դուս կգայ, կամ մեծ դիսիցը :

Պտղատու մարդը ազնիւ վազի նման

Պէտք է խոնարհի, որ լինի պիտան:

Բայց ա՞և՝ բարդի մարդն մէկ շվաք տալիս՝

Եա բազի վախտ էլքիչ մօտանալիս,

Էնպէս ա կարծում, թէ իր պահածն ա

Երկիր ու աշխարք, ու գոռոզանայ:

## Եշտ ու Զին

Էշն մէկ օր պարագ արթշտոտալով,

Երկար անկաջներն թափէթափ տալով,

Թաւալ որ տվեց, մոխրիցն վեր կացաւ,

Թէ ի՞նչ տեղ գնայ, ինքն էլ չխմայաւ:

Շատ էր էն օրը չունքի զռացել,

Փորի հարսանիքն արել կշացել,

Մէկ սաղ շաբաթ էր, փալանի երես,

Կամ դադանակի, բեռնի համ ու տես

զէր լնկել աչքովն, քամակը զզվել,  
Դասն օրի ֆիքրը ի՞նչ կքաշէր էլ:  
Էսպէս քունն առած, դլուխը ուռած,  
Մէկ դռնով ուղեց, անց կէնայ, յանկարծ  
Զիու խրիսնջոյն ընկաւ անկաջը,  
Լէնացրեց շէքը, խլըշաց առաջը.  
Թափ տվեց քշոցն, մէկ թունդ փոշտաց,  
Զունքի գործ չունէր, մէկ կուշտ էլ զռաց :—  
Ու ծանրագողոթ՝ նա թաւլէն մտաւ,  
Բարով տվեց ձիուն ու բարովն առաւ :  
Տէրը տանը չէր իշի բախտիցը,  
Մունջ մունջ բաց արեց նա իր զըիցը :  
Թէ ի՞նչպէս է ձին էս զարուլ անում,  
Որ իրան հանում են, մէյդան բերում:  
Շատ անգամ միսը պոկում ու զամշում,  
Որ ոտն ու դլուխը նա միշտ ման գալիս՝  
Դուզ բռնի . տէրը վրէն նստէլիս :  
«Քեզպէս քեահլան ձին ի՞նչ կանի խրատ.  
Ում համար ես դու սովորում մարիֆաթ :  
Պարկի՛ր քո քէֆին, երբ սիրտ ուղի .  
Զարթի՛ր դու ճաշին, էդ սիրուն փորի  
Ճարը տես, շնորքն ի՞նչ մատահ բան ա,  
Որ քեզ էլ էղպ էս գլխից հանել ա :  
Տեսնի՞ք՝ աշխարքումն ումին են պատվում,  
Նրա՞ն, որ գինին թունգով է լագում .  
Փորը հաստացրել, մէկ բան միտք չանում,  
Լաւ ուտում խմում, նայում իր քէֆին,  
Գիշեր ու ցերեկ բարձին, զօշակին  
Տասը լդրանի ու հինգ զաղանի  
Գլուխին ու փորը տալիս, որ շնթոփ :

Տեղից վեր կէնում, սիրտը քացախած, լուսնում դուս ու տուն, որ մէկ բէզարած  
Պարկ ռաստ բերի, հետը զըից անի:—  
Թէ նրան՝ որ իր արևն ու օրը  
Մաշում, սևացնում, հանում հոգին, որ  
Մէկ կտոր հացի բալքի տիրանայ: :  
Էն էլքըթիցը հանողն հանում ա:  
Շնորք, մարիֆաթն որ խեր ունենան,  
Միները պէտքէ, փիլիսոփի դառնան: :  
Մենք որ չենք սովըում, օսամլ ենք ապրում:  
Ա՞նբախտ՝ մեր գըլուխն շառից աղատում:  
Ղորդ ա, մենք էլ մեր չարչարանքն ունինք,  
Շնորքի համար չե՞ պէտքէ որ տանինք:  
Բեռը քամակիցս որ չեն վերցնում:  
Ու բրախ տալիս ախպում, չօլում,  
Հաւատացիր ինձ՝ հէնց իմանում եմ:  
Աշխարքն իմ փայն ա, էլ ֆիքր ե՞րբ կանեմ:  
Ղօշն ու փալան, ոռտէն ու նոխտայ  
Էնքան եմ պատին քսում, որ էն ա  
Բարդանի շալը, ծզնոտ ու կաշի,  
Վայ տէր կանչելով քէրվում, որ մաշվի: :  
Հէրը անիծած՝ ի՞նչ եմ դարդ անում:  
Թող ջանը դուս գայ աիրոնն՝ եմ ասում: :—  
«Չեր սօյն էն սօյը չի, որ բան հասկանայ,  
Ի՞նչ ասեմ, զզումդ որ լաւ ներս գնայ»:—  
Զին անսաս նրան պատասխան տվեց.  
Ու իշի բերանն էս խօսքովն ցխեց: :—  
«Ղորդ ա, երբ քանի ես քուռակ էի,  
Էնպէս քօթագը ինձ չէր դուր գալի.  
Ամա որ հիմիկ խելքս էկել հասել,

Աշխարքի բանը սկսել. ճանաչել։  
Տեսնում եմ. որ իմ էս կերած հացն էլ  
էս պատիւն, ղուլուդն, որ ինձ տալիս են  
իմ մարիֆաթի հունարն ա, ու էն  
Քօթակ ուտիլլ։ Որ ինչ սհաթի  
Դուս եմ գալիս ես, նայում իմ աղի  
Ծառէքը կանգնած, ինձ են սպասում,  
Մէջքս թիմարում ու լաւ զարդարում։  
Թադաւոր, իշխան ինձ են մտիկ անում։  
Որ նստին վրէս, իրանց փառքն ցոյց տան։  
Առանց ինձ նրանք ի՞նչ օր կունենան։  
Քանի ինձակէս ձի, իշի չեմ ասում։  
Որ խաթրդ մնայ, մեր բանն եմ պատմում։  
Քանի րող եաբու՝ առըս ու մաշված,  
Էս օր չոր խոտի կարօտ են մնում։  
Տաք գօմի հասրաթ՝ ցրտում ու սովում  
Տանջվում, չարչարվում. եա սոված սատկում։

Եա բեռը կրում։—

«Շնորքն, մարիֆաթն ով ասի, վատ ա.  
Գլուխը հաստ ու ծուծը բարակ ա։  
Զես լսել, ով որ բանից գլուխ ունի,  
Ամէն լաւ տեղի նա միշտ հասանի։  
Էնպէս հաստագլուխն՝ որ գու ասում ես,  
Փողն ու շորն էս օր թէ ձեռիցն առնես,  
Պէտք է ջուր կրի, կամ համալ դառնայ,  
Կամ թէ չէ սովու դռնէդուռ մուրայ։  
Շատ դոլվաթի տէրն թէ շնորք չունի,  
Քօշք, սարայումն էլ շատ վախտ չի գիտի,  
Ընջով իր վախտը որ անց կացնի։

Դուռն է դուս դալիս, ոտն է բեզարում:  
Քնում, թէ խմում, գլուխը շշմում:  
Մէյդանում կանգնում, նա թող կուլ տալիս  
Բամբասանք անում, մէկին տէսնելիս;  
Գրքի հոտ չառել, որ նստի կարթայ,  
Սիրտն միսիթարվի, միտքը զօրանայ:  
Փէշակ էլ չունի, որ հետը ընկնի,  
Էսպէս ժամանակ, կեանք չկորցնի:  
Էսպէս ճարակտուր, կամ քնի ձեռին,  
կամ ուրիշ բանի նպ ընկած ջանին  
Օրը կորցնում, քիսէն դարդակում,  
Իր կեանքն էլ հետը նաղդում, սազացնում:  
Ո՛չ կերածն ունի համ, ո՛չ խմածը.  
Գլուխը թշշած, սիրտը խառնրված.  
Իր աղիղ արևն քիչ քիչ վերջացնում,  
Անպէտք աշխարքս գալիս, էլ եղ գնում: —  
Զէ՞ քանի տէրս առաջիս ունիմ,  
Որ չի միտք անեմ, քար պէտք է ըսիմ:  
Թէ նա իմ խէրն առզել, կամեցել,  
Մարիֆաթ, շնորք տվել մեծացրել:  
Անշնորք, անկիրթ, բռի կենդանին  
Համ այլոց է վնաս, համ իր խեղջ ջանին: —

## Խողն ու Եզր:

Խողն ի՞նչ դլուխ ունի, որ ինչ զբից տայ,  
Բայց մէկ օր եղին սկսեց խրատ տալ նա;  
Խող ու խրատ՝  
Տօ անհաւաս :

Ասիր՝ սիրելի՝ սատանին՝ նալաթ.  
Խող փիլիսոփայ քիչ կան՝ բեմուրիլաթ :  
«Իրաւ որ եղն ես՝ հօ սուտ չեն ասում  
Մարդիք ու կապում, լծում քեզ տանջում :  
Արաբայ ու սէլն՝ քո բեռն ու բաժին.  
Վար ու ցանք, քութան միշտ քո շընքին :  
Ախըր խէրդ ի՞նչ ա, կուգեմ մեր կալն :  
Շատ օր սոված ես դու կասում իմանալ :  
Տուն որ գալիս ես՝ մէկ բուռլ խոտ էլ  
Զեն ուղում քեզ տան : Գո բերած մալն էլ  
Զեռիցըդ խում, քեզ մաղթուն անում,  
Իրանք վայելում, քեզ սոված թողում» :—  
«Մարդի հախիցը էզպէս չեն վեր գալ :  
Քանի ձեռիցդ կգայ, քեզ հալալ :  
Քանդիր գեօռբէզեօռ մարդի տունն ու տեղը,  
Ծծիր նրա արինն, քամիր նրա եղը :  
Ոտնատակ արա՛, քանդիր հանդն ու բաղը  
Կեր նրա մասին, հանիր աշքի պտուղը,  
Ո՛չ հաւին խնայիր, ո՛չ նրա ճիխն :  
Ի՞նչ ես հարցնում, մարդ միշտ իր գլխին  
Պէտք է հանապազ մուղայիթ կէնայ,  
Աշխարքը դմակ, ձեռըդ դանակ ա,  
Որդիանց համնի, կեր, ու փորդ արա՛ :  
Ովքը ըլի, ըլի, ի՞նչ ես ֆիքը անում,  
Էսպէս էկել ա աշխարն՝ էսպէս գնում :  
Թէ տեսնող ըլի, գլուխդ էլ կախ քցիր,  
Ինձպէս խոնչալով գնա, չեռացիր :  
Կատվի ձագ գտնիս, թէ հաւի ճուտը,  
Կեր ու քէֆ արա՛, թող էրվի սիրտը :

Տանն էլ մի՛. մնար, որ մէկ խօսք ասեն, ապա մոտեն  
Դուս արի՛, գնա՛, որ խիալ չանեն :

Օ՞ն հազար մարդի տուն էլ որ քանդես,  
Էլի դեռ քիչ ա, որ լաւ մտածես:—

«Եսպէս եմ արել, էսպէս չազացել  
Որ ճրաքուս էկել աչքերս լովել:

Դու էղպէս փեղի նման չորացել,  
Շունչդ դուս կգայ, թէ մէկ փշեն էլ:

Տեսնիք, ով աքեզ ասում աֆարիմ.  
Կամ ինձ բազու խաստ անում, որ պատժիմ,

Ասած է: Հաստ ու բարակն է մէկ դին.  
Վայ ու հազար վայ բարակ մանողին:—

«Խոզն իր խոզութիւնն ձեռից չի թողալ.  
Մեր եզն սկսեց բիրանը բանալ:

«Յեխն ա քո ջանը, գնաս, տաս թաւալ.  
Հալքաթ որ էղպէս կուզես դու խօսալ:

Ի՞նչ օգուտ ունի էն քաղցր արեգակն,  
Կամ էն՝ երկնքի պայծառ լուսնիակն,

Որ լիս են տալիս, իրանիք մեր մանում,  
Մեզանից մէկ քաղցր խօսք էլ չեն լսում:

Կամ անբան երկիրն ուժնից խէր ունի.  
Որ հազար բարի տայ ամեն տարի:

Անձրել գալիս, արել բացվում,  
Սար ու ձոր էնպէս ցնծում, ու ծագկում:

Էն խեղձ մեղքաճանձն էլ որ չի քնում,  
Աղքատ, հարստի բերան քաղցրանում:

Վարդն՝ որ իր հոտը չի պակսացնում,  
Ծառն՝ որ իր պտուղն ինքը չի ուտում:

Հողը ծառին է նիւթ տալիս, պահում,  
Ծառը հողին միշտ շվաք անում, սիրում,

Երկինքն անձրեն ա փայ տաղիս երկրին,  
Երկիրն ծովերիցն բարձրացնում ամպին :  
Սրանք որ չեն ուզում իրանց մենք պաշտենք,  
Ընչը չի պէտք է մէկ խէր էլ տանք մենք :  
Ի՞նչ վնաս ունիմ, որ ես աշխատում,  
Հազար որր, խղճի կարիքն լցնում:  
Ես առողջ ջանը էլ ուր ա տվել  
Աստուած՝ որ չուզեմ բանի պէտք ածել,  
Էն երկրի խոտը ի՞նչ սրտով ուտեմ,  
Էն աղօրի ջուրը ի՞նչպէս ես խմեմ,  
Որ աշխարքումն բանի պէտք չգամ,  
Իմ գլխիս նայիմ, իմ ցաւս հոքամ:  
Ես հօ իմ փորի հմար չեմ աշխատում,  
Որ կերն պակսելիս լամ ու արտնջամ,  
Որբերին էլ ինձ են մատաղ անում,  
Ով մէկ մեծ մուրազ ունի իր սրտումն :

Ամա քեզ՝ անբան,

Թուրքն էլ չե սիրում, ջհուզն հօ ատում;  
Ո՛չ գառն ա հետդ ման գալլ ուզում,  
Ո՛չ կով ու ոչխար իրանց մէջ թողում:  
Ով մէկին մէկ վատ անուն է զնում,  
Խոզ է ասումնրան, կամ գոջի կանչում;  
Քրիստոնէն էլ որ քեզ տունէ թողում,  
Թուրքի, ջհրդի ջդրու է անում:  
Մէյլան դուս գալիս, շունն էլ վրէդ հաչում:  
Մեր հացն որ չուտես՝ կա՞րող ես ապրիլ  
Որ էղպէս ոեխդ սկսում ես ցրվիլ:  
Խոզինը ցեխն է, կամ մուռտառ տեղը,  
Լաւ միտքն երբ կընկնի նրա խելքն, զուղը:  
Գու լագողներիդ՝ էդ իրատը տուր:

Որ տնկքանդութիւն անեն, հսամին ուր :  
Ես իմաշխատանկքն ձեռից չեմ թողալ,  
Քանի շունչ ունիմ ու խէր կարեմ տալ :  
Խմացողի հմար ես չեմ աշխատում,  
Խէր տալն եմ ուզում տեսնում մխիթարյուն : —

## Մշեցի Հայն ու ոսկոռի փէշքաշը

Մէկ Մշեցի Հայ մէկ քաղաք մտաւ,  
Աբէն ուսին քցած՝ որ լիս չե ընկաւ.  
Չեռի դագանակն, դլիսի ֆասն, շարուխն  
Հէնց տեսան թէ չէ էն քաղաքի խալխն,  
Կո՞ծ ձէն տվին, մխօ կանչեցին,  
Էլ ֆոտած եմիշ, խնձոր, սերգել  
Զմնաց, նրա դլիսին քցեցին :  
Շորումն, հաքին հօ սաղ տեղ չթողին.  
Որը բեղն ձգեց, որն աբէն քաշեց,  
Որն վզաքօքին, որն ֆասի ծէրին  
Մուշտի ու քայի լաւ տրաքացըն :  
Ծեր մարդիքն էլ նրան, որ մատով տայիր,  
Հազար տեղ կունդի կտային, որ փչէիր,  
Իրանց հունարը ցոյց էին տալիս,  
Բողազ ճոթոելով նրա վրայ դալիս :

Ծեր խելօք Հայը անհաւատ երկրում  
Մեծացած՝ հազար թօգում շվանում  
Գլուխ, ոտը դրել է, եղ դեւս պրծել.  
Սուսը, փուսը քաշեց, դեռ տեղ չէր ճարել.  
Գնաց միւս օրը, քունջ պուծախ ընկաւ,  
Մէկ եքայ ջվալ օսկոռ մօտ արաւ :

Էս նոր փաղանն էլ որ ուսին դրած, • ուսպան ով  
Զմտաւ քաղաքն նա ուռած, ուռած,  
Քարերն էլ տվին ծափ ու ոտն տռան,  
Բայց ինչ նրանք տեսան, տեսանի քո դուշմանն  
Ով ծպտաց թէ չէ, կամ շվացրեց,  
Կոօն ոսկոռը առաջը քցեց :  
Մէկ, էրկու, իրեք՝ էլ իշխան շմաց,  
Որ շառնի փէշքաշն, մնայ աչքը բաց :  
Ղալմաղալն ընկաւ սաղքաղաքի մէջ,  
Թագաւորն լսեց ու նրան ուզեց :  
Ծո ի՞մալ էնեմ, քո խօքուդ զուրբան  
Գլուխս քո օդաց խողն, և քո ծառան  
Վալլախայ, մեր սուրբ կարաքէ դինայ,  
Զմլայ խենթ ձմեր չօլում էլ չկայ :  
Ծո ծռվի ձեր վիզն, մէկ շէն օր մտնիս,  
Շներ կխաչն՝ մարդի տեսնելիս :  
Մարդիք կխանչն, խեղը խաց կուդն.  
Մգայ էս օլքումն շներ խաչել չեն,  
Մարդիք զիմ վրայ զմլայ ձէն կխանեն  
Իմալ էնեմ շատ օր էլ միտք էրի,  
Էս աղէկ բանը ֆիքրս բերեցի :  
Մգայ ըխտիարն էլ իմ առին չի  
Ինչ ամր կէնես, վըր իմ էս աչքին :—  
Թագաւորն բերան ու փորն հինգ սհամթ  
Բոնած՝ մնացել էր ձեռաց գնացած :  
Խելքը որ մի քիչ զլուխն հինց էկաւ,  
Տօնլուդ ճամփի խարջն էլ ինքը արաւ :  
Մաղը անիին մէկ մեծ հունար, լաւ բան չի,  
Շատ վախտ էլ անողն իր օսկոռն կառնի :

Ես ներքեմի գրած տուամաւորը հնապէս մարդի վրայ  
է գրած, որ ոչ գիր գիտի, ոչ գրի զօրութիւն, ու գր-  
րողի վրայ էլ բերանը կցը վիճակը աշխարհաբառ, գրած-  
ների գլուխը շատ անդամէ էսպէս բան տեսել, մարդի  
միտք չեն հասկանում, հենց իրանց իրանց խօսումնն :  
Մէկ օր էլ մէկիցը էսպէս բան իմացայ, ու ի՞նչ պէտք  
է արած, լաւ կրի, որ դերձիկն իր գաղը, մաշէկալն  
իր բիզը, փինաշին իր ձննդը, փոնչին իր գունդը՝ լաւ  
ձանաշին, տեղըները ծանր նստին, ամա չի ըլում : Ինչ  
ձանից խրատ չի հասնիլ, ամա մարդի սրտին գարդ է  
դառնում, երբ հնապէս օմքին էլ ա խօսում՝ մարդի վրայ,  
որ իր անունը դրօւստ գրիլ չի գիտի : Վորդ են տակի  
թէ տանու տէրտէրին օրհնեա՛ տէր չի ըւել : Ինչ և իցէ  
թուր ու թվանիք չունիմ, արպայ գրիլ պէտքը չի, թող  
բլբիւլը խօսի :

Էշն ի՞նչ գիտի վարդն ի՞նչ զատ ա,  
Նրանիը փալանն ու թաւալ տալն ա :

## ԷՇՆ ՈՒ ԲԼԲԻԿԱՐ

Բացվել էր գարունքն, սար ու ձոր ծաղկել  
Անուշ հոտն ու հոնին ամէն տեղ բռնել :  
Ամէն աշխարհից, հեռաւոր տեղից  
Փախած, կորած դշերն իրանց բներից,  
Էկան, որ գարնան դայն շնորհաւորեն :  
Մէր ու ձագ նստած ծառերի վըէն,  
Թոփերի տակին, սարերի գլխին,  
Իրանց սրտի քէջն յայտնել կրողէին :  
Բայց պարկեշտ բլբիւլն իր էրված սրտի,

իր սիրուն վարդի սէրն ու իր մաքի  
Հասրաթն ու էշիը բերան բերելով.  
Խոր ձորում նատած, դարդերն լալով,  
Նայումէր ջրին, իր վարդի թփին,  
Ուզումէր բացվեալս, իր սիրելին:  
Բայց վարդն անիրաւ մնացելէր փակ.  
Խեղճ բլըիւլի սիրան դառելէր կրակ:  
Մէկ չոր քարի վրայ մնաց կուչ էկած.  
Աչքը իր վարդի երեսին քցած.  
Լալիս էր, էրվում ։ այս վարդ իմ կարմիր,  
Բացվիր՝ երեսիդ մեռնիմ, ախ՝ բացվիր :  
Կամիմ հոգիս էլ առ, քո հետդ տար.  
Կամ էրված սրտիս արա դու մէկ ճար :  
Սար ու ձոր նրա սուքն էին անում.  
Ծառ, ու թուփ, ծաղիկ նրա հետ ցաւում.  
Բայց ձէն չունէին՝ որ մէկ անցվորի  
Եղ պատմեն, որ նրան մէկ չարայ անի :  
Կս դառն հաղաղին սատանի քամին  
Որդիանց հանեց մեր կորած իշին :  
Գունն էր հատել, թէ փալանը ծռվել.  
Խոռակը պակսել, քիթն քամի մտել.  
Գէն էր հետ ածել, թէ տէրը դնքսել.  
Նօխտէն կտրվել թէ բեռից փախել :  
Անկաջները խլշացրած.  
Պոչը ցցած, գուռնէն քօքած.  
Սարնըվեր ընկած, որ չէկաւ առաջ.  
Էն հաստ գլուխը թափ տվեց, գուաց:  
Էն մուռտառ գունչն էլ որ վրայ բերեց.  
Անմեղ վարդի թուփն կօկոմն որ բռնեց,  
Մշրեց ու զռաց մեր էշ ինսամին.

Ապր ու ձոր իրանց աշքը փակեցին.  
Ղշերը թռան՝ ալս, ո՞խ քաշելով:  
Ծաղկներն երեսներն ծածկեցին լալով:  
Իմ անմեղ բիւլքիւն զլուխն թեկի տակին,  
Դեռ չէր հեռացել որ իր թշնամին  
Հենց ոտը փոխեց. ընկաւ ցլիի մէջ.  
Էլ ճանձ ու ադռաւ չմնաց վաղեց  
Ղօթուր մէջքն, ուսերն եարալու արեց:  
Արինն քամակիցն շռուալով փախաւ:  
Թղթահոտ գոմումն կանգնած միտք արաւ:  
«Հարամ ըրի ինձ էս հաստ զլուխն էլ  
Էս գէշ անկաջներն, էս կոպիտ բոյն էլ  
Որ ոչ զռալով, ոչքացի տալով  
Ճանձին էլ աչեմ վախացնում. ախ ով  
Իմ հալիս կրի, վայ նրա օրին.  
Վարդն էլ համ չի տալ իր դարդակ փորինս  
Ելի բլեիւլի էրված հոգին էր

Որ միտք անելով իր դարդը ցաւեր,  
Էկաւ, վարդի վրէն կանգնեց, սուգն սկսեց:  
«Աննման իմ վարդ» ողբալով ասեց.  
Թագուհի իմ վարդ՝ հոգուս սիրելի.  
Անունդ յիշելով, սիրտս խորովի,  
Ընչի՞ դառն աշխարս քեզ բերեց բհամ:  
Որ մէկն էլ աչի՞ իմանում քո համ:  
Երկինքն ատեղդ, ընչի՞ ես մնում,  
Իշի կերակուր, էս փշի միջում.  
Քանի փուշ ու էշ զեռ կան աշխարքում:  
Կմնաս անտէր: Է՛ս եմ միտք անում,  
Ու զլխիս տալիս, էրվում խորովվում:  
Գո սէրն հանապազ կպահեմ իմ սրտու թև.

Բայց ում ասեմ, ում իմ դարդերս՝ այս ում  
են ի՞նչ գիտի զաղըդ՝ սրտումս էլ պահեմ:  
Քեզ, ամէն խաթից միշտ էլ ազատեմ:  
Ելի դեռ քանի իշխ հոտը կայ,  
Մեզ էս աշխարքումս մէկ չարայ չկայ;  
Ես՝ զու ինձ էրի, մէկ օր պրծնիմ,  
Ես թե առ թռչնը, երեսիդ մեռնիմ:  
Իմ սիրուն բլբիւլ՝ մի էղքան ցաւիր,  
Կայ մեր միջումը՝ քո վարդը գովիլը,  
Եշը թրբումն ախը ծնունդն առել  
Ելի թրբի հոտն նա կուզե առնել  
Քեզ վարդ, մանիշակ, քեզ ծսու ու ծաղկ  
Աստուած փայ տվել բլբիւլ գեղեցիկ:

Ասացուածք .

## Խանը :

Ճամանակաւ մէկ նաքեադ հարուստ կար.  
Մէկ որդի ունէր, էն էլ անհունար:  
Մեռաւ, մէկ միլիօն նա փող եդ քցեց,  
Որդին Խան դառնալն մոլումը դրեց:  
Նալաժ սև սիգին, մարդ ի՞նչ կամէնայ,  
Որ փողով չճարի, ջանը դինջանայ:  
Խանութիւնը որ գտաւ, ու պրծաւ,  
Բէկլարբէկու տեղ ճարել կամեցաւ:  
Էն էլ ձեռք բերեց, սիրու դինջացաւ:  
Հիմիկ էլ վազեր լինիլ ուզեցաւ,  
Կամ թագաւորի դռանն ու քովը  
Մէկ մէծ գործք ճարել անցաւ մոքովը:

Դօնշունի գլուխ ըւել խաչ նշան

Դօշին քաշ անիլ էս էր նրա բանն :

Բայց մեր խեղճ Խանի ծուծն ու գլուխը

Հենց դարդակ էին, որ քամիիր, ծուխը

Քթով դուս կդար, այբի կտոր չկար :

Ենորք, մարիֆաթ փողով ով կտար :

—Այ իմ անիսելք խան՝ թող էդ քո Փիքը:

Բայց չէ, մեր խանի էս էր հենց միտքը.

Որ վազիր դառնայ, կամ զօնշունի գլուխ.

Նստի դիւանումն, սրտի սոխն ու ոխն

Հանի, ամէնին հրաման անի :

Որին կպչի նա, իրան չէր յայտնի :

Բայց նրա շնորքն հենց իր մլիօնն էր,

Կնդով էր ուզում բոլորը ձարէր :

Քօշք ու ամարաթ՝ լաւ բարաթ սարքեց,

Խաղինի գուռը, քիսէն բայ արեց :

Աշխարք մնացել էր վրէն դարմացած,

Ով ասես՝ որ նրա հացին չէր նստած :

Զուռնայ, նաղարայ միշտ դմբում էին.

Նրա ամարաթումն, ու նա իր քէֆին

Նօքար ու ֆառաշ ոսկով զարդարած.

Ամէն կողմիցը նրա կուշտը բռնած :

Կառէթումն էլ որ չէր նստում փրված,

Հենց իմանումէր, սար ու ձոր չօքած՝

Իրան էին միշտ զլուխ վեր բերում,

Զունքի սաղ քաղաքն նրա հայն էր ուտում :

Ում լեզուն սուր էր, փորը մեծ ու հաստ,

Փորը սող նրան գովում ամէն վախտ :

Մկան պոչի պէս կուշ ու ձիք անում,

Գլուխը փշում աչքը թող ածում:

Վիրբ լեզվով նրան երկինքը հանում.  
իմաստութիւնը, շնորքն մեծացնում.  
Հոգին հանում ու քիսէն դարգակում:  
Խանի սիրոն էսպէս կատվի ձեռի էր,  
Էսպէսի վրայ նա քաղցր աչք ունէր:  
Ինչ սհաթի էլ հայն ուտումէին,  
Ծիծաղում վրէն, լափ ածում գլխին:  
Բայց ո՞վ չի դիտի, փողը՝ ձեռի  
Կեխտ ա, ու մէկ օր կհատնի կպակսի:  
Միլիօնը գնաց վայ տէր կանչելով  
Խանն էլի փորի ֆիքրը քաշելով.  
Ելածն էլ տվեց քամուն ու կերաւ.  
Ինչ սրտումն ունէր, սատանէն տարաւ:  
Վազիրութիւնը ու մեծութիւնը  
Ղօնշուն ունէնալն, իշխանութիւնը  
Վաղուց էր խեղճը աքլորին բարձել:  
Փորը կարաս, ոռքն էլ ծակ, զլուխն էլ:  
Ինչքան էլ ածես, հէրիք երբ կասի,  
Վայ նրան, որ փորին կդառնայ գերի:  
Խեղճ Խանի բանը քիչ քիչ շլոր դառաւ,  
Զեռը պակսեց ու փողի տուտն հատաւ:  
Միլիօնն էլ գնաց, զուռնէն էլ սաղն էլ:  
Աղեղ բարեկամք՝ հօվաղ հեռացել:  
Սառած ջաղացի պէս մնաց կանգնած:  
Էլ ո՞վ նրա դուռը կդար, կանէր բաց:  
Վիպն էլ բարակեց, երկուտակ փոլն էլ:  
Միս, մորթ, կաշի երեսին կպել:  
Էսպէս նա իրան կանոն էր շինել,  
Երբ մարդ ուզումէր պատճառն հարցնել  
'ին ախն էր քաշում, որ հետը հոգին

Աւզումէր դուս գայ, ասում Հարցնողին : ո՞Ս  
«Ո՛ էս աշխարքումն որդու լաւութիւնն  
կուզի, թող տայ նրան շնորք, կրթութիւն չըսմ  
Խաղին, գօլվաթ կէրթան, կիշանան,  
Մարդիս իր ուսումն կմենյ միայն» :

### Բաղդատի ճամփորդ էշ :

Եփրատ գետի կանաչ զբաղին  
Կհնումէր մէկ խեղջ ըռաջար :

Անունն Հասան, իր հաւատին  
Արի բարի, արդար, անշառ :

Մէկ էշ ունէր մեր Մուսուրմանն,  
Սիրում, պաշտում ախազօր նման :

Էսպէս էր նրան թիմարում, պահում .  
Խէրն ու լաւութիւնն ամէն տեղ զովում.  
Վիսը բայվումէր, թէ օրը մթնում:  
Քամակին բաղմած՝ Հասան տում մանում:  
Մտքի հետ ընկած վախտն նօխտէն թողում:  
Էշ ախազօրն էսպէս էր նա հաւատում.  
Որ նա իր բեռը միշտ տուն կտանի.  
Էշն իմաստուն էր, խօսիլ ողէոքը չի:

Գլուխն էլ շատ հաստ, կոխին ու անկաջն էլ:  
Բցը սուրահի, տեսնողի աչքն էլ  
Հետը գնումէր) հէնց զգաստ, հպարտ էր :  
Հասանի գարգերն ցրմում զռալով,  
Մեծ մեծ անկաջներն թափէթափ տալով:  
Սիրուն բոյն լորիք ա՝ քաշում մաշում ա

Մեր սիրտը, բայց մէջն ոչինչ խէր չկայ,  
Երբ գոդրէն դարդակ ու ծուծը բարակ  
Մարդ չի ճանաշում ոչ էշ, ոչ քուռակ:  
Խելք է հարկաւոր: Պարոն էշն քիչ շատ  
Կատուց էլ ունէր, էլ ի՞նչն էր կիսատ:  
Բեռի տակին չէր բուդուրմիշ ըլում.

Աչքը առաջին, գուղ ճամփիէն գնում:  
Դրի դէմ գալիս նա շարժում կամաց,  
Ինչպէս մեծ մարդը իր բաղսւմն կանաչ:

Անուանի Սաղին էնպէս է գրում:

Թէ ծշմարիտ խելքն էնդում ա մալում:

Որ իմաստունի խրատը լսնէք:

Ու բեռի տակին բնաւ տնքալ չենք:

Կտանենք անսաս: Տեղն ընկած վախտն էլ

Կհամբերենք, զլուխ չենք ցաւացնիլ:

Մէկ անգամ Հասան իշխ վրայ բազմած,

Գնումէր քաղաքն նա երիշ քաշած:

Մէկ դարվիշ էկաւ փէտով նրա առաջն:

Միրուք, մալն սիստակ: Մէկ պուղօղ զլիսին:

Հասան տեսաւ՝ ձեռն դրեց ճակատին:

Քարի օր՝ աչքի լիս՝ ասեց Գարվիշն:

Փեղսմբարն օրհնի քո ալիշ վէրիշն:

Էշ քո տակին ի՞նչ էշ ունիս սիրուն:

— Դմ' թիշիշ բարայ՝ իմ մսիթադութիւնն:

Ընկելն էս էշն ա: իր գեղեցկութիւնն

Խելքովն աւելցրել իմ սիրտս առել

Խոնար, հնազանդ, ճամփին վէլադ էլ:

Նօխտէն թողումնիմ, իր զլիսու գնում

Ամէն ժամանակ, ու ճամփին գտնում:

Զէ թէ ես սրան, սա է ինձ պահում:

Հոգիս էլ ուզեն, կտամ որտ գնում։  
Քսան թուման էլ տան, չեմ ծախիլ սրան։ —  
— ևթէ կուզես, հարիր ես կտամ դրան։ —  
Շատ ուրախութեամբ Սուրբ Դարվիշն ասեց,  
Որ կտկղե Հասանն, ու ոխին նայեց։  
Հասան իր իշխն՝ իր աչքի լսի  
Հետ չեր փոխիլ հեւ ամա թումանի  
Զէնն որ իմացաւ, ջանը գող ընկաւ։  
Փողն ում չի խաբել։ Հասան բօշացաւ.  
Ի՞ւ պէտք է արած։ Զեռը բարձրացրեց,  
Էն աբարձիլն էր ուզումնա հէնց։  
Դարվիշն միտք արեց ու խօսքը փոխեց.  
Ուրիշ թահը նրա գլուխը փշեց։

«Նհախ ասեց, որ իշխդ ծախես։  
Գիտեմ, որ գրան գու շատ սիրում ես։  
Խեղճդ գալիս ա, աչքիցդ եմ տեսնում։  
Լսիր, ի՞մ որդի՛ տես, ի՞նչ եմ ասում։  
Շատ կարելի ա էնպէս բան արած։  
Երկուսիդ բիրդան հայի հասցրած։  
Ասա ինձ էշդ հեւ գիտի՛ խօսիլ։ —  
— չէշ մէկ բառ էլ ա, ի՞նչ պէտք է ծածկիլ։ —  
— Կամ գրել կարդալ խելքը բան կտրել  
Աշխարքի խենն ու շառը ծանալել։ —  
— ի՞նչ ես հարցնում։ — Բաս որ էղպէս ա.  
Է՛տ էշը ուրիշ քեամալի տէր ա։  
Պէտք է պատհամժիւն, աշխարհագրուժիւն։  
Լաւ գիտէնայ, ու փիլիսոփուժիւն։ —  
Ա՛յ, ի՞նչ ես գարդակ խօսքեր դու խարջում։  
Ա՛յ Դարվիշ բարայ, ու զլուխս տանում։  
Է՛տ որ գիտենար, գու ի՞նչ ես կարծում,

Ել մտիկ կտար գնչիս, կմասր :  
Ինձանից Ել հօ դա անյ կրկենար :  
Եշն Ել որ ախքր փելսով դառնայ,  
Ել ուր կարչին բաս Դարվիշ ու Մոլայ : —

«Գեղ տէղ մեծացածն քեզ պէս միտք կանի.  
Բերանդ Ել որ քեզ քաշէս, լսու կրի :  
Եշ փելիսովա՞յ : Ի՞նչ զարմանկը բան առ  
եղաղէս հրաշք մկամ աշխարքումս կայ :  
Սուտ սանիսիթ չունիմ, քեզ խորհուրդ տալիս  
կամ առ Ես քիսէն, կամ լսիր խօսքիս :  
Թող սիրելի Եշդ մէկ Մէքբայ տանիմ :  
Աչքը բաց ըլիս ես դլիին կանգնիմ :  
Մէկ քանի վախտ դու հուփ առոր քիչ սրտիդ,  
թէ որ բարով գանք, ու տեսնիս իշխու :  
Ի՞նչ քան լեզմերի դա տեղեակ կըլի,  
Որ քեաբը գնայ, ուխտ անի, տեսնի :  
Մէնակ սրա ազօթքն ու արած նամազն  
իրան Ել կույ, քեզ Ել քո մուրազն :  
Թէ ջրի պէս դա դուռան չիսպիթայ,  
իրանից նոր բան չըշինի, դուս ժայ,  
Աշխարքի շնորքն դա մարսած չըլի,  
Նրեսիս թքի, ինձանից ուզի  
Դրա ջառը մէն . ի՞մ վզիս ըլի :  
Տարի չքաշի, մեղ Եղ կտեսնիս :  
Փողն Էն ժամանակն զու կիտուկ կանես :  
Կամ բանը կտրի, հարիր թումանն առ,  
կամ թող մանք գնանք Մէքբայ բարաբար : —  
«Թողի»՝ ասեց մեր հապտաղլուս Հասանն :  
«Ի՞նչ եմ անում քողն, որ ունիմ դըրան :  
Ափսոս եմ գալիս, վաշխար չկորչի :

Էն ի՞նչ փառք, պատիւ, էն ի՞նչ աչք կըլի  
Ու տեսնի՞ տակիս էշը դուռանի  
Համն առած՝ եղ դայ. ինձ տանի, բերի  
Աստուած ձեզ բարի ճամփոյ տայ, դնաք.  
Ու սաղ սալամաթ բարով եղ կառնաք: —

Ասեց ու Հ սան իշխն վեր էկաւ.

Աչքերին պաշեց բարով տվեց, առաւ  
Դունչ, ականջ ու պոչ մեկ էլլաւ տնդղեց,  
Ղօլան ու իալանն, ոռտէնն գրստեց,  
Նօխտէն ու բիպը քըցած նրա վիզը,  
Հոքոց հանելով, Գարվշին տրվեց:  
Եթասխրս բաշիմի՞ իմ էշ հողի ջան:  
Լալով. կտիծալով ամեց մեր Հասան:  
«Եւ չէի թողար քեզ էղպէս միայն»:  
Հալալ ձեռի եմ քեզ էսօր յանձնում:  
Աստծուն ամանութ՝ մեր հանդումն, ջոշմն  
Ի՞նչ սկտքէ սովորիա, որ տանը մնաս,  
Երկիր շտեսնիս, աշխար ման չդաս:  
Ճանձի, ու բօնի, բղեղի ձեռին  
Դու եսիր դառնաս, կորցնես քո գին:  
Գնան, սրա աղօթքն ըեկ միշտ կասհի,  
Սիրտդ ուրախ քոնի, իմ անունս յիշի:  
Մէկ քանի ծունը էլլինձ համար դռ զի՞ր  
Ուսումք առ ու էլլ շուտ մերադարձիր:  
Մահմադի աչքը վիշտ քաղցր ըլի:

Փչէի փուշ ու քարն, որ քեզ կղիպչի: —

Ինչպէս որ էլլաւ սուրբ Գարվիշ բարէն  
Կուզ կուզ անելով բաղմաց իշի վրէն:  
Լէն շորերն չորս կողմն մոված՝ ճողորակ  
Ոտներն աջ ու ձախ ընկած քաշ ու կախ:

Էշը գնումէր, տէրը ձէն տալիս :  
«Խօսքը խօսք ահա, տարին անցնելիս,  
Ես ձեզ կսպաեմ»:— Ասեց ու ստով  
Ընկաւ նա ճամփայ՝ Դարվշի փէդով:  
Հոդին բերնին կապած՝ նա դեղը հասաւ,  
Ու տանը նատած՝ մունջ մունջ միտք արաւ :  
Աստուծով էշը շատ քեամալի տէր  
Դառած եղ կգայ : Են վախտն տեսնողներ  
Թող զարմանան ու աչկըներն դուս գայ,  
Հիմիկ ի՞նչ խօսիմ, թող նա եղ դառնայ :  
Մէկ տարուց եղև իրար մի տեսնինք,  
Իրարից փափադ ու հասրաթ առնինք :  
Մէկ տարի էսպէս թող ստով ման գամ,  
Եղոյ իմ փառքը աշխարքին ցոյց տամ :  
Շուշայ չի ոաներս՝ որ թէզ փշըլի,  
Մոմ չի իմ մարմինս՝ որ հալվի, երվիս:—  
Էսպէս էր ցաւում Հասան, միտք անում :  
Օրերն համարում: Տարին լրանում:—

Դարվիշն իշի վրայ շատ տեղ անց կացաւ,

Բոլոր Օսմանլվի հողը ման էկաւ :

Պտղովն լիքն ու էն մեծ Դիարբէքիր,

Աքրշի մաքեան էն Պարսից երկիր,

Մարգարտով լիքը Մոուր, Ղայսարի,

Հալէր, ու Թուսադ, ու հին Նդեսի.

Երջեց ու հասաւ մեծ քաղաքն Հարամ

Ուր՝ ինչպէս պատմեն, Ճնվեց Աքրահամ:

«Հըէս էս տեղ ա՝ ուխտաւորն ասեց,

Մեր իշի նօխտիցն բռնեց, կանդնացրեց :

Որ Աղէքսանդր Մակէդոնացին

Զարդեց, հետ ածեց Պարսից ղօնշունին :

Են տեղ էլ կեսար քաջ Հռովմայեցին  
Էկաւ ու տեսաւ, յաղթեց Միհրդատին :  
Աչքդ բայ արա, որ գլուխդ մանիւ :—  
Բայց պատմութիւնը իշխն քեա՞ր կանի :  
Ոչ ջուղար տվեց, ոչ մէկ բան խօսեց :  
Շատ բէզարելուցն անկաջներն ցցեց,  
Նրա հօր խէրին թափէթափ տվեց,  
Պոչ ու գլուխ զլեց, ու մէկ կուշտ զռաց  
Սուրբ Դարվիշն էլ հօ՝ միտքը մոլորած,  
Զէր կարծում, թէ ինչ կայ իր տռաջին,  
Բէղաֆիլ ալս, վայ նալաթ սատանին.  
Իշի ոտն առաւ մէկ ախմախ քարի,  
Բուդուրմիշ էլաւ էնպէս բիրաղի  
Խնքը մէկ զրադ քեալի վրայ ձդվեց,  
Դարվիշն միւս կողմն՝ ջարդվեց ու փովեց :  
Պատմութիւնն էլ գնաց, անիծած ուխտն էլ  
Դարվիշն իշխն էր անքալով օրհնում,  
Էն իր ոտների ցաւն ու դաւն քաշում :  
Օրհնութիւն, անէծք ինչ խէր ունին՝ որ  
Էսպէս հաղաղին լինին զօրաւոր :  
Դարվիշն քիչ քիչ իր փալաս փուլուսը  
Իր պոպոզ գդակն, իր ջուն ու պողը  
Հաւաքեց, մինչև էշն էլ խոր քնեց.  
Դարվիշի կէտին, որ կոխքը չքօքեց,  
Բիրդան վեր թռաւ, պոչ ու դունչ դզեց,  
Հողն էլ թափ տվեց, առաջին կանգնեց :  
Սուրբ դարվիշն էլ հօ՝ բիզը հաղուծ,  
Վիզը կրակեց ու վռկեց առաջ :  
Շատ ու քիչն Աստուած գիտէ՝ թէ ինչքան  
Ճամփայ դնացին, ու էկան բիրդան

Մէկ մէծ քարվանի նրանիք ռաստ հկան :  
Ուղու ու էշ բարձած, ջորի ու հայվան  
Ուխտ էին գնում քեաբն՝ զնդզնդալով :  
Մահմէդի գետուը ուղում կարօտով :  
Դարվիշն զարվշն ու էշը իշին՝  
Բարով առան շուտ՝ ու առլամ տվին :  
Ուր շոքիցն էր տրսն ջում, էրլում :  
Ուր փալանը բեռը ձռմռում :  
Քացի ու զռոց, չօշ ու զռզռոց  
Ո՞վ կարայ պատմիլ ու հարայ հրոց :  
Ի՞նչ զարմանք: Մէքքի անունն ու մէրը  
Վառել էր նրանց սիրան, հոդին, փորը :  
Բայց էս ի՞նչ էր վեռ, մարդ որ միտք անի  
Թէ ո՞վք էին նրանց վթէն բաղմած՝ աղի :  
Թիւ չկար, համար նրանց ո՞վ կտար.  
Խմաստուն ասես, հէքիմ ու ստաքեար.  
Աստղաբաշն ու լաւ պատմութիւն գրող,  
Փիլիսոփայ ու խաղ, տաղին հանող :  
Զադուբաղ ու էլ զուռումսաղ ասես,  
Լեզու գիտացողն թէ հէսաք քցես,  
Բանը կհամնի հօ Տրապիդն,  
Ել ո՞վ եղ կդայ մեր քարվանի քովե :  
Դարվիշն էլ լաւ օր սրանից աւելի  
Երբ ձեռ կքչէր, աշկերտին կրթի :  
Մէկը ունքերը ամպի ողէս կիտած՝  
Աշխարքի բհամ գալն էր եղ պատմում :  
Մէկը քիթ ու նոթ քացախացրած՝  
Լեզվի դուս գալն էր մեկնում բաց անում  
Թողանք դերձկի ու ջուհլակի զրիցն  
Խառադի բրդի ու աշպազի բրինձն.

Մաշեկարի բիպն, չարվաշարի վիպն :

Ե՞ն ձենն էր ընկել Ք'ն խօսքն, ասու ու լին,

Որ մարդ իր զլիին թէտէ տէր չիէնար,

Բէինն էլ հետը կծափէր, գուս կգար :

Բայց ամէնի ունին, բերանն ու լեզոն :

Մէկ թարաքեամայ կուկէր ճղի իսկոյն :

Սարում մեծացած՝ բռի, աղջանաղ.

Հէնց իր գուռնէն էր վշում, ու իր սաղ.

Թէ Արտամ պապը Եւի հետ դրախտումն,

Թարաքեամէլսոր էր խօսք, զըից անո մ:

Աջակողմն էլ մէկ հաստափոր ախմախ

Մէջ էր բերել իր շնած տաղ ու խաղ.

Իր հաստ գլուխը երկինքն էր հանում,

Ո բշի զրածը ցեխն ու ռեխն կոխում:

Զախակողմն էլ մէկ ուռած եզի գլուխ՝

Հով տալով ճգվել՝ մզում իր չոր զուզն.

Թէ աշխարքիս վերջն ի՞նչ պէտք է բռի.

Էլ չէր հարցնում՝ թէ ներկայ վահարի

Բանն ի՞նչպէս կըլի, ու չէր էլ գիտում:

Էշ փիլիառփէն բոլորի միջումն,

Գլուխը քաշ արել՝ անկաջ էր գնում,

Ինքն իրան անասս միաքն լուսառորում:

Տէր ու տուն, թաւլայ մաքից էր հանել

Էնքան էս ֆքրումն թաղվել էր, խրվել:

Ճանձերին նալաթ՝ որ չէին թողրում,

Պոչ ու գլուխ գաղում, ու սիրտը խառնում:

Աւղոր ուխտն արեց,

Էշը էշին առաւ.

Դարվեշ, քեալըլայի, թաջիր ու ամնափ

Մուրազի հասած, ամէնն եղ էկան :

Վերջը վախտն էկաւ, տարին լրացաւ:  
Հասան իր իշխն հասրաթ մնաց, մեռաւ:  
Մէկ իրիկուն էլ խիստ դարդավարամ  
Նստած իր տան դռանն նա քնահարամ.  
Ա՛յս ո՞յս քաշելով՝ ասում էր, լալիս;  
«Անիրան Դարդից՝ ախրը իմ իշխան  
ի՞նչ արիր, այ զու անիծած, անսիրտ:  
Փուշ դառնար ճամփէգ, շլենքդ փորումի  
Ցցվէր, որ իմ տունն էսպէս քանդեցիր,  
իմ աչքիս լիսը հանեցիր, փշացրիր:  
Բոլոր սաղ օրը մէնակ եմ բանում:  
Դու իշխս վրայ փաշի պէս նստում:  
Քէֆիդ ման դալիս, աշխաթքը շրջում:  
Հարամ ըլի քո տված մարիֆաթն,  
Գունս հատել ա, դարդ ու դասաֆաթ  
Զանս առել սպանում ինձ՝ ա բէմուրվաթ:  
Իմ ջափիս կէսը էշս էր վերջացնում,  
Էսպէս մնացել ևմ ես ցաւի միջումն:  
Ակոր երդ կըլի, որ մուրազս առնիմ:  
Էշ ախպօրս տեսնիմ, ու հողը մտնիմ»:—  
Էս ասեց՝ թէ չէ աչքդ բարին տեսնի,  
Գլուխն որ վեր քաշեց, մէկ ձորի մշիկ  
Դարմիշն շեք արած՝ իշխ վրայ՝ անսաս  
Գալիս էր կամաց ու դէմը տմբում:  
Դէմն իշխ գլուխը քաշում, ու բզում.  
Գամակի վրայ շուռ դալիս, ննջում:  
Գլուխն իշխ գլխին տալիս, վեր թռչում:  
«Տօ հրէն դալիս են՝ վայ քո տղիս աղայ՝  
Մարդի միսքը կարծ ու սիրտը նեղ ա։—  
Ասեց, տեղիցը էսպէս թռաւ Հասան,

Որ ուս ու զլուխ իրարով դիպան;  
Դարվիշն մօտ էկաւ՝ նրան ողջոյն տալով.  
Հասան դնաց առաջ լալով, խնդալով:  
— «Ո՞ւր է իմ ազիզ էշն»: — Նա ձեն տվեց:  
— «Քօն ես, չես տեսնում»: — Դարվիշն եղ կրկնեց:  
— «Բարեկամիդ էլ որ չես ճանաչում»:  
Ծախել ես զլուխով, էլ ի՞նչ ասեմ; ում:  
Է՞ս չի քո էշը: — «Վայ օրիս ըմբիս,  
Ես ո՞ր ջուրն ընկնիմ, ի՞նչ վայ տամ գլուխու  
Աչքս դուս էկել էշս չօլախացել:  
Սաղ ոտի տեղը կաղ ոտն ա ճարել:  
Ալահ, իլլալահ փեղամբարի գլուխն,  
Մահմադի արեն գիտէնայ, իմ ծուխն  
Հատել տունս քանդմել: Ես էլ ի՞նչ անեմ»: —  
«Էդուր խօսք չունիմ: Կհաւաստացնեմ»:  
Որ հոգին կաղ չի ու միտքը շատ սուր»:  
Դարվիշն ասեց նրան ու աչքն ածեց մուր:  
«Վայ իմսե օրին՝ աչքն ուր է մնայել.  
Որ էսպէս քօքիցն քուացել փշել: —  
— «Եատ զորդ ես ասում, մկամ իմաստունն  
Զի՞ կարող ըսիլքօս ու շատ դիտուն:  
Դուռանումն էլ ա էս բանը գրած:  
Մէկ աչքով պէտք է սիրով քննած:  
Լաւ է, աչքով քու ըսիլքանյ մաքով: —  
«Են հաստ վիզն ուր է, ասեց տէրն լալով.  
«Են լիքը փորը, էն դաշն ու թուշը,  
Էսպէս քօսոս, լզար ե՞րբ էր իմ էշը:  
Գեամու պէս էկել լցիլ, հաստացել.  
Գառան անկաջներն մասումը թաղմել.  
Էսպէս էր դղդղումնա ման դալիս էլ

Որ ուղարք ու գոմել կուղեին ճաքել։  
Հիմիկ հէնց բռնես՝ ուշ ըւի դառած։  
Ուկոռն մնացել կաշվեցը կպած։  
Փշես, վեր կընկնի, ի՞նչ իմ գլուխս լամա։—  
«Հօ ռայպարի խելքն՝ իմ բարեկամ։  
Հօ էս քո իշխ. ո՞ր ջհանդամ զնամ։  
Տօ խելք ասա՞ խելք. ի՞նչ անտաշ մարդես։  
Մարիֆաթ ուղիք, հասա փորն ի՞նչ կանես։  
Լեզու հարցըն, տես՞ ի՞նչ ա սորվել։  
Ապա սկսի՛ր դու ինձ քարենքել։—  
— «Մարիֆաթ ունի՞ ուրեմն իմ էշք»։—  
— «Ել ասիլ կուղե՞»։ Ասեց Դարվիշը։—  
«Ել Սողոմոնի գիրք չի մնացել  
Բոլոր Ասիոյ լեզվներն հօել  
Զրի պէս գիտի։ Խանիկ ու բեզի  
Զուղարը կտայ։ Աստծուն է յայտնի։  
Տար, մէկ քանի օր թաւլամի կապի՛ր  
Թող, քիչ դինջանայ, յետոյ իմացիր։  
Ժամանակ չունիմ էր դու, եր քո տված։  
Ամանաթդ։ Ասոռւած ձեր բանն յաջողի։  
Զեր ցաւն ու չօռը թող քամին տանի։  
Մնաս բարով իշխ. հետը մուղարար։  
Ես պարտքիցս սրճայ, դու արա՛ դրան ճար։—  
Թողութիւն արա՞ սուրբ Դարվիշ բարայ,  
Ուր գնասա, քեզ քոմակ վեղամիքարն դառնայ։  
Աւել պակասը ներիք, ինձ բաշխիր,  
Գնաս բարով, ինչպէս դու բարի եկիր։  
Ու դու աչքի լիս՝ իմ էշ շնորհալի՝  
Մտի՛ր առաջվան տեղզ ու դինջացի՛։—  
Դարվիշն հօռացել ճամփին գնումէր,

Որ Հասան իշեն դեռ գուրգուրումէր։  
Քու աչքին պաշտմի կալ ոտն համբուրաւմ։  
Մէջը սղալում ու հետը խօսում։  
«Ընդի՞ էր բլըլի եզւն չի բլըլում։  
Ըստի՞ բերանդ կապել չես խօսում։  
Այ իմ շնորհալի՝ արևածաղեկ՝  
Ախը էդ հալին՝ թէ տեսնին մարդիք։  
Քեզ ի՞նչ կասեն ինձ, մէկ լաւ միտք արա՛,  
Աշխարք շըջելու մարդիքաթն է՞դ ա։  
Ամա չէ, էս օր բէզարտծ կըլիս։  
Մի քիչ դինջացի՞ր, դու լսիր խօսքիս։  
Եքուց տեսածդ պատմիք մեզ քիչքիչ։  
Ի՞ր ջանր դուս դայ՝ ճամփին հօ չամիչ։  
Զէին տալքեզ՝ էդ ես էլ լաւ գիտեմ։  
Հլայ դինջացի՞ր՝ ես քեզ ինդրումենմ։  
Ցետոյ պատմի՞ր մեզ քո սովորած բաները։  
Խոտով, դարմանով լիքն ա մեր ամբարը։  
Պռտէպունկ՝ դու հէչ էլ չիվախէնաս,  
Կեր, քէֆիդ պարկիր, որ դու կարէնաս։  
Իշտահով տոիլ թէ ի՞նչ ես տեսել,  
Լսել, իմացել քեզ դատում արել։—  
Էն մէկ գիշերը սաղ տարի դառաւ  
Հասանի համար, ընչանք լուսացաւ։  
Հարեաններին բոլորին ասեց՝  
Աւետիք տալով ու հաւատացընց։  
«Թէ իր թաւլումը մէկ փիլիսոփայ,  
Կայ իշե ցեղեցն։ Մարդ չի զարմանայ։  
Դաստայ կապած՝ միւս ըն հաւաքմեցին։  
Հասան ձէն տվից։ Այ մեր ջամըհաթ՝  
Էս ձեզ՝ իմ էշը ոչ բարակ, ոչ հաստ։

Թաղաքեամերէն ոտանաւորով  
Ու Ասորելար՝ գտ արձակ զրով  
Կարողէ խօսիլ շնորքը յայտնիլ.  
Խնդրումեմ հետը մի քիչ զրից անիլ։—  
Մէկ քաչալ քօռ մարտ՝ միրուքը ղաբայ,  
Գուս էկաւ մէյդան, որ հետը խօսայ։  
Գլուխ վեր բերեց ու սալամ տվեց,  
Իմաստուն իշխն խօսալ դուս կանչեց։  
«Երկինք ու երկիր ի՞նչպէս են կապված,  
Լուսինն ընչե՞ է պոզով ստեղծված։  
Յոյս ունիմ տօնեց, որ չքարկանաս,  
Թասիրս բաշխես ու չի՞ նեղանաս.  
Ա՛յ չորս ոտանի, ուսեալ կենդանի՝  
Գեղսցու դոգրումն ի՞նչ խելք, շնորք կրի։  
Է՛տ իմաստութեան ծովը դարդակի։  
Ո՛ր մեզ էլ քիչ փայ դրանից հասնի։—  
Էշը գունչը կապ՝ մնացել էր կանդնած,  
Ու մեր գեղսցիքն էն ա հազրված՝  
Ուզումէին՝ որ Հասանի գլխին  
Մէկ ջվալ ծիծաղ ածեն ու քաշվին։—  
«Մի քիչ սաբր արէք՝ Հասան ձէն տվեց,  
Ամօթու էսպէս սա ձէնը կտրեց։  
Փիլիսոփայ է, որ հատը չունի։  
Հառատացէք ինձ, թողէք, միտք անի։—  
«Կացէք մէկ սհաթ՝ տօ ի՞նչ ա էլել։  
Փինաչին սկսեց էն կողմիցն ասել.  
Փորը հաստ, ինքը եօռնիկ ղախաչի  
Եարամազ քօսայ, շատ էլ հանաքչի։—  
«Մտիկ արա ինձ, այ երկար անկաջ  
Իմ փիլիսոփայ՝ որ զնացիր Հաջն։

Ասա՛, մի տեսնիմ՝ քանի՞ն ա սհաթի:

ի՞նչ ես ամազում, էս էլ հօ դժար չխ։—

Էշը ունքերը մի քիւ եղ տարաւ,

Քամի մտաւ քիթն, թէ երազ տեսաւ.

Անկաջներն նորէն թափէթափ տվեց,

Մեր կանգնողներին լաւ մտիկ արեց.

Քթի ծակերը թունդ լէնացրեց,

Ոտներն եղ քաշեց, պոչը դուզ ցցեց,

Ինչքան դվաթի ուներ, էնպէս զել զռաց,

Որ պատ ու գետին մնացին խլացած։—

«Հայ բարաքեալլայ՝ նոր փիլխոփայ:

Էղ հունարն հօ մեր քուռակումն էլ կայ,

Շէն կէնայ, հաստատ պահողեղ տունը,

Որ ունի իր մօտ քեզ պէս իմաստունը :

Աստուած ողորմի՝ խրատողեղ հոգուն։—

Մաշէկարն ասեց: Բայց խալխի լեզուն

Կապվել փակվել էր ու էնպէս ծիծաղ

Խրանց օրումն էլ չէին տեսել ասղ։—

Հասանի փոխանն էն կատուն ընկաւ,

Որ մէկ դագանակ խոկոյն վեր առաւ.

Խշի ոտն ու զլուխին լաւ բարաթ դզեց,

Խղճի ոսկուտանիքն ըոլոր փորն ածեց:

«Ընչի՞ ես ծեծում: այ դու հէր օրհնած»՝

Փինաչին էլ եղ Հասանին ասաց.

«Ասա՛, ի՞նչ տեղից ես դու իմացել.

Թէ էշդ մարի ֆաթ, խելք սովորել:

Փիլխոփոսի պէս խօսալ զիտի,

Ո՞վ ա լսել թէ էշը կխօսի.

Դարսին ուզել ա աչքդ թող ածի,

Ոտով ման չգայ, որ չքհղարի:

Դու էդ դդում, գարդակ գլխովդ  
Նրան քօմակ արիր էդ խեղճ իշովդ :  
Էդ հունարի տէր էս աեղ էլ շատ կայ,  
Ու դու բարեկամ, ի՞նչ զարմանք բան ա,  
Ոլ էշ ձամփայ գնայ, էշ էլ եդ կդայ.  
Բայց էշը նա է, որ չհաւատայ» :

### Քօռերը

Մէկ քանի քօռ մարդ ընկած մէկ ձամփայ,  
Ենպէս էին գնում, ինչպէս քօռն կէրթայ,  
Երբ սաղ աչկանին ձամփէն ցոյց չուայ :  
Ոտն էին փոխում, բուգուրմիշ ըլում,  
Կամ քեալի տալով՝ գետնի վըայ չօքում :  
Անց կէնողի մէկն՝ էս որ հէնց տեսաւ,  
Սիրտը մըմնջաց, մէկ փէդ վեր առաւ,  
Ու նրանց տվեց, որ էլ վեր չընկնին .  
Փէդը դէմ տալով՝ գնան, տեղ համինն :  
Քօռերի մէկը գլուխը պատռած՝  
Փէդը ձեռն առաւ ու ընկաւ առաջ,  
Ու մէկէներին եղիւիցն քաշեց :  
Էսպէս իրար բռնած՝ քօռ սուրուն քաշեց,  
Ու առաջվայ պէս էլ վեր չկ ընկան,  
Լօք լօք անելով՝ քիւ որ հեռացան,  
Յանկարծ մէջըներն խիստ կոխւ բացվեց,  
Եռաջին գնալն որն ասես, ուզեց :  
Էս չվերջացրած՝ մէկ ուրիշ քամի  
Մտաւ քթները, թէ ձեռնափէդի  
Ասլն ընչեց կըթի, ի՞նչ ծառից կտրած : —  
Ենոխի փէտից առ Մէկն ասեց յանկարծ :

Միւսն ընկերի գնչին շմռած,

Հաստատում էր՝ թէ կազմոց է պոկաց:—

Էսպէս ամէն մէկն իր զուռնէն վիշեց,

Փէղն առաւ ձեռը ու մասնահարեց.

Որ ձեռ քսելով էն բանն իմանայ,

Ի՞նչ որ սաղ մարդի փէշակն ու գործն ա:

Աղլամազ քոռերն իրանց մարաքէն

Է՞նպէս չաղ արին, էս դհէն էն դհէն,

Է՞նպէս ղալմաղալ դատբէղատ արին,

Որ անկաջ պտէր, լսէր նրանց խօսքին :

Աստանէն հօ՝ էս ա միշտ ուզում,

Մատն էնպէս խրեց նրանց քոռ աչքումն,

Որ ամէն մէկի բերնիցն մէկ ջվալ

Ուշունց դուռ էկաւ, թէ քաշես հալալ:—

Լեզուն հօթուր չի, որ կտրած տեղը

Մրժնջայ, կալնի մարդ իր ըռեխը,

Կրված սրտի գեղն կամ քարն ա, կամ փէղն,

Էն էլ հազիր էր՝ զօյմաղօչում տղէրք:

Գլուխ էր, որ պատովեց, ատամ, որ ջարդվեց.

Որն հարայ կանչեց, որն արինն սրբեց:

Էն փէղն՝ որ պէտք էր նրանց պահպանէր,

Միս, ազգան շինեց բոլոր ոսկոռներ:

Բայց ի՞նչ անես, բանն էն տեղ էր ընկել,

Որ անկաջներն էլ էր սալթ քառացել:

Է՞ն տուր ու քօթակն տվին նրանք իրար,

Շուն էլ որ ըլէր, տէրն կմոռանար:

Բայց իր ասածը հէչ չաղեց մէկն էլ

Թողայ, որ էս կրակն չէրի իրանց էլ

Խէրի տեղն՝ էսպէս՝ էն տված փէղը

Քանդեց նրանց տուն՝ էս կռվի եղը:

Իմաստուն մարդիք մեզ նման քօռին  
Որ հաւատ տվին, օրէնք կարգեցին,  
Ուղեցան՝ քօմակ մեղ նրանք անեն,  
Զէ թէ մեր տունը քանդեն, կործանեն:  
Բէդուղուր քօռին ի՞նչ ժամ պատարագ  
Ենքան ձգձգեցինք հաւատ ու բաժակ,  
Որ մէկի տեղը՝ բիւր ու միլիօն  
Խրար գլուխ կէրան, որ պահեն կանոն:—

## Արաբէքը :

Արաբէքումը բարձած կճճներ  
Գեղցին կողէր գնալ դարնըվեր :  
Մէկէլ ձիանոնցն թողեց սարի գլխին,  
Ուղեց՝ որ տանի առջի արաբին :  
Խելօք ձին նրան քամակին տարաւ,  
Որ չե գլորվե սէլը, զաստ արաւ :  
Սարի գլխիցը ջահէլ ձիու մէին  
Որ դեռ ուներումն ունէր բոլոր խելքն,  
Ամէն մէկ ոտը փոխելիս՝ անձար  
Չիուն նախատեց, զժվեց չարաշար:  
Թուր ու մուր ու ախաղ նրա գլխին ածեց,  
Ոտները քարին ծեծելով՝ ասեց :  
«Հլայ մեր գոված ձիուն նայեցէք,  
Աստուած կաիրէք, ի՞նչպէս ա, տեսէք,  
Գորդի պէս գետնին կպել Ճապաղել  
Վայ, վայ, վայ, ամա՞ն, քիչ մնաց մէկ էլ  
Ե՞ւ քարին դիալչի: Ծուռն է, թէք, ան թէք:  
Ղօշաղ կաց, զօշաղ: Տօ մի մտիկ արէք,  
Մեր եզը ետքուն քարին կպաւ էլի:»

Այ էդ հաստ գլուխդ փորբդ պիծնի՛:  
Զախ դհիդ վըայ՝ այ տնով քանդված.  
Տօ էշ անասուն՝ ի՞նչ ես մոլորված  
Մեացել էդ տեղ: Աարն ըլիս գնում:  
Էն էլ գիշերը, ովկ կըլի զարմանում:  
Թէ չէ դարիվեր, էն էլ ցերեկը՝  
ի՞նչ գժար բան ա, թող ասի մէկը:  
Մտիկ անելիս՝ սիրտս պատռվում ա:  
Թէ քեզանումէլ ուրիշ հունար չիայ:  
Չուր կկրէիր՝ չալամիշ էլած,  
Էղպէս սրագալով չէիր գնալ ցած:  
Թէ սրէն մեղ գայ աղա՝ համբերի՛ր  
ի՞նչպէս կթռչինք, դու դարդ մի՛ անիր:  
Վախտ չենք կորցնիլ մեր վթի բեռը  
Զէ թէ կքաշենք, կվազինք դարնըլիերո: —  
Էս տեղ շունչքաշեց, դօշը դուղ ցցեց,  
Ու ճամփայ ընկաւ, ջուր տու քշի արեց:  
Հէնց իր տեղիցն թռաւ, ընկաւ դարնըլիեր,  
Բեռը լիլիսկաց, սէլը դէս ու դէն՝  
Մէկ տռաջ քցեց ձիուն: մէկ եղը:  
Ճարը որ կտրվեց, մեր զօշաղ էս ձին  
Չորս ոտն վեր առաւ. հայդէ՝ գնաց քէջին:  
Աստուած յաջողա՛նրա բանն՝ ախալէր,  
Էլ ի՞նչ եդ պատմեմ նրա տիրոնիշ ցաւերն:  
Քարով, քարափով ընկաւ ջարդվելով,  
Զափ քցեց ու զու քաշեց՝ գնալով՝  
Ծնկաւ չորս ոտովն մէկ խանդակի մէջ,  
Էլ ի՞նչ կմնար սաղ սալամաթ հէչ:  
Գլուխդ ապրի՛ կՃՃների տէր.  
Էլ ի՞նչ կանեն քեզ նրանք ախր խէր:

Ես աշխարքումն էլ էս ջուռայ մարդիք  
Շատ կան: Խրանցից ունին մեծ կարծիք:  
Ուրշի արածին միշտ չեն հաւանում,  
Բայց երբ որ բանը իրանց է մնում,  
Չուին ու մածունը իրար են խառնում:  
Տան էնքան՝ բանը խժժում, մժժում:—

## Ճգնաւորն ու Արջը:

Հարկաւոր տեղը լաւութիւն անիլ  
Խիստ շատ լաւ բան է. էս ովչի ասիլ:  
Ամա ամէնի ձեռիցը չի գալ:  
Վայ նրան՝ որ գժին կուզի եախէն տալ:  
Խաթրապահ յիմարն թշնամուց վատ է  
Փորձանկի կտայ, յառաջ յետոյ թէ:

Ժամանակաւ մէկ սարում, կորած տեղ  
Մէկ մարդ էր կէնում, անսուն ու անգեղ:  
Մէնակ կէնալը խելքից կըհանի:  
Քիչը եաբանի տեղն կհամբերի:  
Իր սրտի հալը տմէն մարդ կուզի  
Ընկերին ասի, որ շատ չուանջմի:  
Թող ասեն՝ բաս էն չայիր չիմանը  
Էն ձորի կանաչն, էն ծառաստանը,  
Էն շըվաք տեղը, սառն աղբիւրն, հոլը,  
Շաղիների հոտը, դըերի քովը՝  
Ի՞նչ տեղ կայ, որ մարդ միրաը բաց անի,  
Շատ լաւ՝ խօսք չունիմ, ի՞նչ ասիլ կուզի:  
Բայց էլի մարդի սիրտը տրափումէ,  
Երբ զըրից տըփող չունի, մէնակ է:

Էսպէս էլ մեր խեղճ ճըգնաւորի սիրան  
Շատ էր նեղանում. որ մարդ չըկար մօսն;  
Ընկաւ նա մէշէն, որ ընկեր ճարի,  
Հետը ճանաչվի. օրը անցկացնի:

Մէշէն ու խա՞ն:

Արջն ու գէն ի՞նչ են, թէ որ ռաստ գան:  
Էսպէս էլ էլաւ, մեր ճգնաւորին  
Մէկ արջ ռաստ էկաւ խոր մէշի միջին:  
Ի՞նչ պէտք էր արած՝ գգակն վերցրեց.  
Գտած սիրելուն խոր գլուխ տվեց:  
Արջն էլ իր թաթլուկն զէմ արեց նրան:  
Ի՞նչ գլուխ ցաւացնեմ: Հէնց իրար տեսան,  
Բարով տվին, առան, բարեկամ զառան,  
Սիրաներն կպան, էլ ո՞ւր հեռանան:

Սաղ օր իրարից չէին բաժանվում:

Թէ ընչից խօսում, ի՞նչ զթից անում,  
Ի՞նչ առակ ասում, ընչով պարապում,  
Կամ ի՞նչպէս իրար միտքը խմանում,  
Մինչև էս օր էլ էս ինձ չէ յայտնի.  
Ընչի սուտ ասեմ, որ հոգիս տանջվի:

Ո՛չ ճգնաւորն էր շատախօս անչափ:

Արջ ախազօն էլ հօ մօրուց լեզուն կապ:

Էսպէս նրանց բնիցն կռիւ լիս չընկաւ,

Ինչպէս որ ըլեր, ճգնաւորն ասաւ.

Թէ գանձ է ճարել նա իր ընկերումն :

Արջի եղեիցն ընկած նա մէշումն :

Առանց նրան սիրար հէշ չէր դիմանում,

Ի՞նչպէս գովի նրան, ինքն էլ չէր գիտում:

Մէկ օր էլ նրանց մաքովն անց կացաւ,

Հէնց հաւէն մի քիչ որ չի տաքայաւ.

կամնաշ. ու մէշայ նըրամնք դուս հկան.

Սար ու ձոր ու ջուր ընկան, հովանան :

Բայց չունքի մարդը տըկար է արջից,

Էսպէս ծըգնաւորն առաջ նըրանից

Բեղարեց ճամփին ու մընաց եղը,

Ընկերն հենց տեսաւ, խօսեց նրա հետը :

«Փընիր՝ աչքի լիս՝ մի քիչ դինջացիր.

Ես քեզ կպահեմ. հէջ դարդ մի՛ անի՛ր»:

Արջի խօսքըն նրա անկաջը մըտաւ,

Արջշտոտաց. պարկեց, քունը տարաւ :

Ղարաւուն արջն էր, պարապ չընսոեց :

Գոռաղաղինայ մէկ ճանձ վըայ վաղեց :

Արջը ընկերին դինջ՝ հով էր տալիս.

Աչքը երեսը քըցած՝ նըրատելիս :

Ճանձին հետ ածեց. թըշի վըայ նըրատեց.

Ելի որ քըշեց, քըթին նա ծըրտեց:

Քիչ քիչ կատաղեց, էլ չուղեց փախչի.

Ինքն իրան ասեց առանց մէկ խօսքի,

Թաթլուկը լիզեց, անսաս պըսպըզեց,

Շունչը փորը առաւ ու խոր՝ միտք արեց :

«Ես քեզ կըթըռցնեմ»: Ասեց համբերին:

Ճանձը հէնց էկաւ ճակատին նստեց.

Ինչքան զօռ ունէր, մէկ քար վերցրեց:

Ու զօյմաղօչում հէնց տուր, թէ կտաս,

Էնպէս վըայ բերեց քարն, որ մունջ, անսաս,

Որ ճղնաւորի ջարդեց ճակատը

Ճախրիփուրթ արեց, ջնջինց դագաթը:

Ընկերի հոգին վաղ էր տեղ հասել,

Բայց ախմաւիս արջը գեռ կուշը կարել.

Հով տալիս նրան, որ անուշ քնի.

Բայց քուն ու երազ մեռլին ի՞նչ կանի:  
Մեռելն իր տեղը արջը իր մէրին՝  
Բարեկամ էկան, բարեկամ գնացին : —

## Առասպելք :

ԱՆՔԱՂԱՔԱՎԱՐԻ ԷՇԼ :

Զին յանկարծ իշխն մէկ տեղ ռաստ էկառ,  
Ճամփէն շատ նեղ էր, անց կէնալ չէլաւ :  
Զին կարծեց՝ թէ էշն իրան պատիւ կտայ,  
Բալքի ինքն իրան ճամփից դուս կգայ:  
Բայց ի՞նչ տեղ էր էշն մարիֆաթ առել.  
Կոպիտ ծնվել էր, կոպիտ մեծացել :

Էնպէս դունչը դուզ՝ ձիու վրայ դնաց.

Զին քաղաքավարի զօդուղին ասաց :

«Զի՞ լինիլ, մի քիւ դու զրադ կանգնիս,

Որ ինձ տեղը ըլի, դու էլ ճամփայ դտնիս:

Կամ թող տուր, որ ես էլ ա առաջ գնամ» : —

Բայց իշխ ու շը երբ ա մէկ անգամ

Էնպէս անոշ խօսք մաել, տեղ արել

Ոտն ու պոչն սկսեց դհայ պինդ ցցել.

Զիուն տեղ շատ ու ճամփէն կտրել :

Զին որ էս տեսաւ, ինքն զրադ կանգնեց.

Մեր փաշայ իշխն համեցէք արեց :

«Զեմ ու զում, ասեց, քեզ պատվից քցեմ,

Ու քո իշութեան փառքիցն քեզ զրկեմ» : —

## Անցոլորականքն ու շոնը:

Երիկնաղէմին մէկ ղօաղքուչով  
Երկու մարդ իրար հետ զքից տալով.  
Անց էին կէնում. մէկ էլ էն տեսան,  
Դռան շեմի տակիցն մէկ շուն հէնց բիրդան  
Ծղրդաց. իսկոյն վեդվագալ սկսեց :  
Էս ձէնի վրայ սաղ քուչէն լովեց,  
Յիսունից աւել շներ մօտ էլան.  
Մեր անցվարների գլուխը տարան :

Մէկը կռացաւ՝ որ քար վերցնի,  
Միւսը ձեռիցն բռնեց ընկերի.  
«Սիրելի՝ ասեց՝ տեղը ծանր կա՛յ,  
Շան փէշակն աւ որ հաջի հանապաղ :  
Քարով դու շներ ճամփայ շես թերիլ  
Թէ չես ուզում նրանց դհայ կատաղացնիլ  
Գլխըներս առնինք, գնանք մեր բանը .  
Թէ չէ քար քցին ի՞նչ կօգտի շանը :—  
Եղաւ մի քիչ տեղ որ չի հեռացան.  
Շներն էլ անսաս քաշվեցին բիրդան :  
Բերանը պատռած հայվարայ մարդի  
Փէշակն էն ա, որ մեզ վրայ հաջի:  
Բոյց դու քո ճամփէն՝ դուզ բռնի, գնա՛,  
Կհաչի. կհաչի. էլ եկ կդինջանայ :

## Ալսապատրակը Փորս անելիս :

Մէկ թարուն դաղան մէկ տեղ թօփ էլան.  
Ալջին բռնեցին, մէկ դուզ չու տարան :

Հոգին համեցին, կաշին քերթեցին.  
Ինչքան ուժ ունէր, ամենն իր քէֆին  
Մեր լուսահողի արջին քրբեցին :

Որդիանց որ տեղ՝ նալաթ սատանին,  
Ալապատրակին էլ հենց էն հաղաղին,  
Ծուռ անկաջները խլըշացրած :  
Արջի անկաջի ծէրիցը բռնած,  
Քաշումէր, որ նա էլ իր փայն հանի :  
Անդու թօփալ կաղ, տվին ձէն ձէնի,  
Մեր գաղաները ու վրայ թափեցին :  
Դու ինչ տեղից ես խառնվել մեր միջին,  
Քեզ ֆորս անէլիս՝ ախր ով ատեսելու :—  
«Տօ ի՞նչ էք ասում, սկսեց խօսիլ :  
«Բաս Աստուած չ՞ւնիք, որ չէք մտածում,  
Թէ ես չըէի, դուք հէջ ձեր օրումն  
Սրան կտեսնէիք, որ քէֆ էք անում :  
Ե՞ս չի մէշիցը սրան դուս խոկեցի,  
Ու թուշ էս տափը՝ ձեր առաջն արիւ :—  
Լաւ տեսան, որ էլ ինչպէս էր փչում :  
Քէֆըներն էկաւ սրա էս խօսքում :  
Արջի անկաջի ծէրը կտրեցին,  
Ու բաժին տվին մեր Ալապատրակին :  
Ետքայ մարդի վրայ շատ ծիծաղին էլ  
Էլի նրա բաժինն չեն պակացնել :

## Կատուն ու Մուկը :

«Ընկել եմ ձեռըդ՝ դէ ուտումես, կեր,  
Էլ ի՞նչ ես խառնումիմ դառը ցաւեր,  
Գիտեմ, ոք իմ վերջս էս օր հասել ա,

Ֆիլն իրան համար՝ իր ծամփէն գնում։  
Քա հաշալը նա բանի տեղ չըցում։—  
Նրան մէկ ուրիշ շուն խրատ տվեց։—  
Յա՞ֆ, յա՞ֆ, յա՞ֆ՝ նրան պատասխան տվեց,  
Մեր պստիկ շունն, ու էլ սապն սկսեց։  
«Հէնց էդ ա մրտիս շատ զվաթ տալիս։  
Որ առանց կռվե՝ անունս լսելիս՝  
Մեր հարևանի շները կասեն։  
Տէս՝ Զզարի շունն ի՞նչ զօշաղ շուն ա։  
Որ ֆլի վրայ էլ հաշել կարում ա։  
Բաղի քնձոտ մարդ էլ էս ա ասում։  
Եբբ մեծ մարդի վրայ նա իր ձին քշում։—

Օառը

Մէկ ծառ մէկ ձորում էր բհամ էկել  
Մէկ օր սկսեց տրտնջալ ասել  
Թէ ընչի՞ չի ինքն մէկ սարի ծէրի,  
Դուս էկել որ նրան ամէն էլ տեսնի։  
Հէնց էս էր ասածն ցերեկ ու գիշեր։  
Համը որ տարաւ, Աստուած ի՞նչ անէր։  
Նա կուզի աշխալքն միշտ խաղաղ մնայ։  
Որ չլաւ ծառի մաւրազն էլ տվեց նա,  
Ու նրան ասեց։  
Շատ բարի՞ քո տեղն կասեմ՝ որ վոխն,՝  
Թող սիրուդ հովանայ, գանդաս ինձ պէտք չեն։  
Իսկոյն գեսնիցը կրակ դուս եկաւ,  
Զորը սար գառաւ, ծառը բարձրացաւ.

Զանը դիմջացաւ:

Ազքը սկսեց չորս կողմը քցել  
իշ բախտի վրայ քէֆը քօք անիլ:  
ի՞նչ պատահեցաւ. էլ ինձ չի յայտնի,  
Աստուած բարկացաւ մէշին բիրադին:  
Բոլոր քամուն՝ թունդ տվեց հրաման.  
Ինչքան մէշէք կան, անեն քօքը հան:  
Կատաղած քամիքն վրայ թափեցին.  
Սար ու ձոր իրար ավին, ջարդեցին.  
Գող ընկաւ մէշն, ճուխի ասես տերեւ  
Չախըփութ էլան, լցուեցին մէկ ինև:  
Ամենն իր սև օրն սկսեց լաց ըլի՛  
Բայց երկնքիցը քօմակ չէր հասնիլ:  
Ճուխը ու կոխը ջարդված, քօք ու տակ ցրված:  
Միտք արին ծառելն՝ սարի վրայ բուսած:  
Երանին նրանց՝ որ ձորի միջին  
Ա՞խ՝ զուս են եկել ու էլ դարդ չունին:  
Են սանոն աղբըի, էն հով շվաքի,  
Են կանանչ խոտի ու սիրուն ծաղկի.  
Վրեն ու միջումն, չորս կողմը բռնած,  
Դինջ անմեղ ինդան արևովն իշանց:  
Ոչ քամին նրանց ձեռը կիտիի,  
Ոչ արե՛ քօքն ու տեշեներն կէրի:  
Խօսքը գեռ կիսատ, էնպէս թափ տուեց  
Քամին՝ որ նրանց քօքը հան արեց:  
Ի՞նձ վրայ եմ ասում էս պարդ առակը,  
Ի՞նչ հարկաւոր ա մարդիս՝ թագ, պսակը,  
Քանի ցած է տեղդ ու միտդ հանդաբատ,  
Էնքան քեղանից հեռու փորձանք, դարտ:  
Ա՞խ՝ մի՛ ցանկար, մի՛ հոգւոյս սիրելի:

Ու բարձր պատվի հասնիս բիրագի :

Պատիւն, պատուհան՝ որդի են մէկ մօր՝

Փուչ կանեն՝ սիրուն արևդ ու քո օր:

## Գէլն ու Գառը :

Ով զօռ ունի, հէնց անձարի գլխին

Ե քացի տալիս, հանում աչքն, հողին:

Իր արած մեղքն էլնրա վզին դնում:

Օրինակ շատ կայ էս մեր աշխարքումն :

Գառը մէք շոք օր աղբըի վրայ

Զուր էր խմում, որ քոռաղադինայ

Մէկ սոված գէլ էլն կողմը կամաց

Հոտ առաւ, էկաւ գառին մօտացած :

Բայց էլի բանը օրէնքով ուզեց

Բռնի, ու յանկարծ գառին ձէն տվեց :

«Հայ դու անզգամ, վասթար կենդանի.

Ի՞նչպէս սիրտ արիր՝ իմ խմելու ջրի

Համն ապականել, էսպէս պղտորել՝

Էդ մուռտառ դնչովդ՝ էսքան ախալ, զիրիլ

Սրա մէջը խառնել, իշտահս կոտրել:

Նայիր՝ թէ ի՞նչ դառն օրի կհասնիս,

Գլուխդ որ չուտեմ, ե՞րբ կպրծնիս:—

«Քո գլխիդ զուրբան՝ մեղքս ինձ բաշխիր,

Արածս լաւ տե՛ս, յետոյ ինձ պատժիր:

Քո ջուրն պղտորիլ ի՞նչպէս կարող եմ,

Հարիր ոտ հեռու քեզանից ցած եմ:

Իմ հաղդս ի՞նչ ա, որ էդ բանն անեմ,

Ու քո մեծութեան աչքիցը ընկնիմ»:—

«Թշուան՝ ուրիմն ե՞ս եմ սուտ ասում

Էղպէս լիրք՝ բերանդ ի՞նչպէս ևսցըվում։  
Էս թողանք, անցած տարին դու չեիր,  
Որ ինձ հէնց էս տեղ փիս խօսք ասեցիր,

Սիրաս կոտրեցիր :

Հէնց զիտես, էստոնք ևս մուացել եմ,

Աւ դրա ջիգըլ մէկ օր հա՞նիլ չեմ։—

«Ճէր իմ և Աստուած՝ էս ի՞նչ լսեցի,

Տարիս թամամ չի. քեզ ո՞նց վնասեցի։—

«Բաս քո ախպէրն էր։— «Ախպէր էլ չունիմ։—

«Բաս խնամիս, կամ կնքահէրդ էր։— իմ

Ասածս ասած է։ ինչ որ էլ անես,

Աղքականներիդ մէկը կըլէր։ Ես

Կարձ՝ քեզ ասումեմ որ թէ դու, թէ ձեր

Զօրանն ու շունը. բոլոր նօքեարներ

Իմ թշնամին էք, արինս էք ուզում,

Որ խմեք, ու էս կանաչ տեղերումն

Չեր քէֆին ման գաք, մեզ փչացնէք.

Բայց դուք մեր հունարն հլայ տեսել չեք։

Աստուած է էս օր քեզ իմ ճանկս քյել

Բ լորի մեղքն էլ քեզանից ուզել։—

«Ե՞ս ինչ եմ արել որ ինձ ևս բռնում։—

«Կտրիք՝ անզգամ ձէնդ քեզ եմ ասում։

Գլուխ ունիմ, որ քեզ հետ չանայ տամ։

Քո արածն էն առ որ ես էս անզամ

Սոված ըլելով քեզ ձեռք եմ քցել.

Ուզումեմ ուտել փորս կշտացնել։

Ի՞նչ իմ բանն ա, որ նստիմ, քննեմ։

Կամ մեղք հարցնեմ. կամ քեզ ազատեմ։—

Ասեց ու գառի վզիցը բռնած՝

Քաշվեց մութ մերին, ասամներն սրած։

## Առիւծն ու Մոծակը :

Խղճի վրայ մի' ծիծաղեր։  
Անձարին մի' վիրաւորիր։  
Խեղճ մարդն էլ շատ անգամ քեզ էնպէս։  
Կ'ծի, որ կմնաս սևերես։  
Քո դլսին շատ էլ մի' հաւատար,  
Լսիր էս մասալէն, անկաջդ առ։  
Էնպէս պատահեց, առիւծ թագաւորին  
Մոծակի սիրտը՝ խիստ խոցեց մէկ օր։  
Մոծակ շահգաղէն մարսիլ չկարաց,  
Կուրիւ բաց արեց՝ հաքված հազրված։  
Կռվուն էլ ինքն էր, շվի ածոյն էլ  
Թօփն էլ վրէն հազիր, եարադ, ասպաբն էլ։  
Բղզալով թռաւ թշնամու վրայ։  
Առիւծ փաղիշահն հէնց խմացաւ, նա  
Հանաք էր անում վրէն ծիծաղեց։  
Սայմիշ չարեց նրանի, ու մնած նատած։  
Մոծակն ի՞նչ կանէր էս հալին հանաք։  
Մէկ՝ թիկունքիցը, մէկ՝ անկաջ ու աչք  
Սաղ ածելով՝ նա ծակումէր, դաղում,  
Առիւծն եռալիս՝ վեր կէնում, թռչում։  
Էլ եղ վախտ, ֆռանդ հէնց որ ճարռումէր,  
Էլ եղ վեր դալիս, միսը պոկումէր։  
Առիւծի ջանը որ շատ կրակ ընկաւ,  
Պոչովը ղամշեց, էլ եղ ճար չէլաւ։  
Ղօշաղ մոծակը արնի համն առած,  
Ոիրան էլ նեղացած՝ էնպէս բարկացած,  
Թռւշ՝ էկաւ, նոտեց ճակատի վրայ,

Արինը ծծեց տղըրկի պէս նա :  
Անձար առիւծը շատ էլ զօռ արեց .  
Եալը թափ տվեց, գլուխը շարժեց,  
Բայց դու ոչ մեռնիս: Մոծակն իր քէֆին  
Նստած՝ մէկ քթին, դնչին, անկաջին  
Էնպէս էր զարբում, որ հողին հանեց :  
Առիւծի ճարը հէնց որ կտրվեց,  
Պարկեց գետնի վրայ, սկսեց գոռալ  
Զանն առել էր ցաւն, ի՞նչպէս լար իր հալն :  
Պէմն ատամննին էր նա ղըմտացնում .  
Դէմը գետինը չանդուում ու պոկում:  
Գոռոցն ընկելէր մէշայ, ձոր ու սար.  
Թև, ոտ ունեցողն հօ սասանահար  
Գլուխն առել, կորչում լալով, դողալով:  
Հէնց բռնես մէշէն բռնած՝ կրակով  
Վառվում ըլի, կամ ջրհեղեղ գալիս :  
Նոր հասած յետին վերջը աշխարքիս:  
Բայց ում հունարն էր էպան ղալմաղալ  
Մոծակին, որ չի կարաց դիմանալ:  
Առիւծն սկսեց գոռալ, մննչալ,  
Գետնի վրայ չօքիլ նրան մեղայ գալ:  
Խնդրեց, որ իրան յանձանքը բաշխի,  
Ու մէջըները հաշտութիւն ընկնի :  
Մոծակը առիւծի հալը տեսնելով,  
Մեղքն էկաւ, հաշտմեց, նրան ներելով:  
Զիգրը հանած ու սիրտը հովացած,  
Թշնամուն էնպէս քարովը տված,  
Ընկաւ սարէսար՝ ինքն իրան բերնով  
Պատմեց իր արածն, գլուխը գովելով:—

# Արտուտը իր ձագերովը ու երկրագործը :\*

Առակ է ասած : — Ընկերիդ խօսքին  
 Հաւատուա, էլի պինդ կաց քո բանին :  
 Շատ դրուստ խօսք է, օրհնվե բերանն,  
 Որ էս ասել ա՝ բաս լսենք առակն :  
 Գարունքն որ բացվեց, օրերն քաղցրացան,  
 Սար ու ձոր ծաղկեց, դաշտք ու անդաստան  
 Խրանց զարդարանքն հաքան, զուղվեցան,  
 Ծաղիկ, հոտ ու հով ամէն տեղ առան :  
 Ամէնն էլ ուրախ ձէն ձէնի տվին,  
 Արջը մէրումը, ձուկն ծովի տփկին,  
 Ղշերն յարդերումն, սարերի գլխին  
 Խրանց արեի վրայ խնդացին :  
 Զգիտեմ, կամովէր, թէ հէնց զօռով.  
 Մէկ արտուտ թռչուն քէֆին նայելով.  
 Թռչումէր, գնում, ման գալիս սիրուն,  
 Էլ չէր մտածում. թ'էկել էր գարուն :  
 Քիչ էլ մնար, պէտք էր անց կէնար :  
 Վերջը նրա էլ բնութիւնը քաշեց,  
 Սիրտը ուզեց, որ որդոց մէր դառնար,  
 Զագերն եղեին քյէր ու ման գար :  
 Ղշին ի՞նչ պէտք էր շատ մեծ թաղարէք,  
 Ոչ տուն կուզի նա, ոչ մեծ թանթանէք :  
 Բուն զրեց յարդումն, ձու ածեց, նստեց,  
 Մէկ քանի օրից յետոյ ճուտ հանեց :

\* ) Արտուտ զվին աշխարհաբառ աբունեսուն : Են ասում: Մտի նման,  
 բայց զվին մէկ սուր քաքուլ ունի, ու հետ ածէլիս փոքր թռչումա,  
 էլեղ վեր գալիս, նստում: Բունը միշտ յարգի միջումն ա դնում:

Յորէնը հասաւ, հնձի վախտն էկաւ,

Բայց ձագերի դեռ օրը չհասաւ,

Որ թռչնի, գնան, ուտելիք ձարեն,

Մօրն էին նայում; կուտ բերի, ուտեն:

Մէկ օր էլ որ մէրն բնիցն հեռացաւ,

Խրատ տվեց նրանց, ու էնալէս թռաւ:

«Մնաք բարով՝ ասեց՝ իմ ազեղ որդիք,

Կացէք դուք էս տեղ, նաբաթ ա՝ մարդիք

Թէ գալու ըլին, որ յարդը հնձեն,

Իմացէք, նրանիք ինչ խօսին, ասեն,

Ու ինձ ասեցէք, ուրիշ տեղ ձարեմ:

Հիմիկ գնում եմ, որ պաշար բերեմ»:

Հենց նա գուս գնայ, յարդի տէրն էկաւ,

Յորնին մտիկ արեց ու որդուն ասաւ:

«Յարդը հասել ա, դու էլ ես տեսնում,

Հասկի ձիթը կախ մեր ցորնի միջումն:

Էլ վախտ չի կորցնես, էքուց կգնաս,

Մեր բարեկամներին իմացում կտաս:

Որ գան մեր յարդը, մեղ քօմակ անեն:

Հենց խեղճ ձագերը իմացան էս ձէնն,

Վկիվացին ու անսաս վշվացին:

Այս ուր ես մեր մէր, ի՞նչ տեղ՝ ասեցին:

Արի, դու հասիր՝ ախ մեր հաւարին:

«Ի՞նչ ա պատահել, մէրը հարցրեց


Բարեկամներին որդին գնայ, կանչի,

Որ էքուց յարդը հնձվի, պըծնիս:

«Էլ ոչինչ չասեց, մէրը հարցրեց:

«Եստուր համար գուք հէւ դարդ մի՛ անէք:

Թողլիսը բացվի, յետոյ իմացէք:



Էս ձեր կերակուրն, կերէք, կշացէք,  
Որդիք. ու պարկինք : Դուք հաց կերել չեք: —  
Ինչպէս որ էլաւ, նրանք կտկտացրին,  
Գլուխ գլխի տված՝ մօր թէի տակին  
Կուչ էկան ու շում աչքը խփեցին:  
Օրը լուսացաւ, բարեկամ չեկաւ,  
Ղուչն էլի պաշար բերելու թւաւ:  
Ու խեղճ երկրագործն էլ իր հանդն էկաւ:  
Ժաժ գլուխն, որդուն էլ ասաւ:  
«Հեռու բարեկամն, մօտիկ աղջականն  
Ի՞նչպէս մէկ կըլին՝ որդի սիրեկան :  
Աստծու անունը տուր, էքուց գնա,  
Հօրակնազօրդ ու մեր խնամնն ասաւ: —  
Վլլոցն ընկաւ մեր ձադերի մէջ:  
Էլի իրանց մօրն ձէն տվին՝ որ հէնց  
Էն սհաթին եղ գայ, իրանց ճար անի :  
ՏԱՇ՝ մեր ազիզ մէր՝ արի, ախ՝ արի:  
Ազգականներին որդին գնաց բերին:  
«Հէջ ձէն մի՛ հանէք», մէրն ուստանանեց,  
«Մի՛ էլ վախէնաք ամենելին հէջ:  
Աստուած յիշեցէք ու էս տեղ կացէք.  
Թող օրը բացվի, յեսոյ դուք տեսէք.  
Ազգականն էլ իր դարդը կունէնայ:  
Մուխանաթ մարդի մշանէն շատ ա:  
Երրորդ անգամը տէրն իր հանդն էկաւ:  
«Ամա՛ օյին են գալիս մեղ, ասաւ:  
Շատ բարի՝ էս թող մեղ խրատ ըլի,  
Որ ումուղ չանենք էլ ուրշի խօսքի:  
Ու մեր սրտումը լաւ տպաւորենք,

Գնա՞ սիրելի՝ մօրդ ու քվեթք ասա՞  
 Որ մանգաղն առնին, էքուց հանդը գան,  
 «Վայ նրանց՝ որ այլոց ապով կմնան»:  
 «Արտուրն որ լսեց, ձագերին կանչեց :  
 «Հիմիկ վախտն էկաւ, որ գնանք», ասեց :  
 Զագերն էլ խսկոյն մօա էլան գլխին,  
 Առաջին անգամն թևերը բացին  
 Ու մօր եղեիցն ինչպէս որ էլաւ,  
 Հանգիցն դուս էկան, քիչ քիչ բարձրացան  
 Ու թռռալով ու ճռվլալով  
 Ու ծլվալով, ու ճթճթալով  
 Ծվալով զվալով  
 Արդի վրավը զնացին, անց կացան,  
 Հասան ամպի տակն, աչքից հեռացան :

### Բայեաթիք :

Երկինքի կանաչ կարմիր:  
 Այ օիրուն կանաչ կարմիր.  
 Լերդս ու թոքս չորացել են,  
 Սար ու ձիր կանաչ կարմիր :

Դաշտի ծաղիի ռանգէռամնդ  
 Մեզ նման կարմ է օրն ու կետնք  
 Ծաղիկն՝ որ հու չունէնայ,  
 Էլ ինչ օքումու ռանգ է, ռանգ :

Ընկել եմ ախ սարէսար,  
 Դարման չունիմ ոչ մէկ ճար :  
 Ուզումեմ դամ քո ոտը  
 Առաջս ծով սար է սար :

**ՏԵս էս զշերի ախ՝ թասթէն.**  
**Մօտդ էկան, քեզ հասրաժ են,**  
**Թռի՛ր զբանց հետ, արի՛,**  
**Թուրն ինձ լսիի՛ր, քեզ դասթէն :**

**Էնդուր համար եմ, էնդուր**  
**էրլում, պրծնիմ ախ՝ մէկ օր :**  
**Աշխարքն ինձ տաս, պէտքը չի՛.**  
**Թուրդ եմ ուղում, ինձ է՞ն տուր :**

**Սրտիս մի՛ տար, որ էրես,**  
**ինձ փոթոթես, խորովիս :**  
**Հոգիս ուզի՛ր, ես քեզ տամ:**  
**Թռի մէկ տեսնիմ քո էրես :**

**Կանաչ են սար ու ձոր,**  
**Զէնս բարակ, սիրտս խոր :**  
**Հոգիս էլ տամ, չես լոիլ**  
**ի՞նչ ես ընկել սար ու ձոր :**

**Սիրտս կաթել ա արին,**  
**Քո մարմինն եմ, քո արին :**  
**Ե՛դ արի մէկ, աչքովդ տես,**  
**Թէ սիրելուդ ի՞նչ արին :—**

**Էն տանը մեռնիմ, ախ՝ էն տան.**  
**Որ աչքդ բացիր՝ անման :**  
**Մէկ բուռն հողիդ եմ կարօտ,**  
**Ասա, որ ինձ ախ՝ էն տան :—**

**Ո՞վալսել սար սարի**  
**Դիպչի, մօտ գայ, ու կափի:**  
**Քո սար զլիսին ես դուրբան,**  
**ինձ մի՛ անիլ սարսարի :**

Դոշիս վրայ քարքաշան  
